

Հայկական Կարմիր խաչի ընկերության

2022-2026թթ.

ռազմավարություն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) հիմնադրվել է 1920 թվականին: 1995 թվականին ճանաչվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից և նույն թվականին ընդգրկվել է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի կազմում:

Մարդասիրական ոլորտում պետական իշխանություններին աջակցող կառույց և Հայաստանի Հանրապետությունում գործող ամենամեծ կամավորական կազմակերպություն հանդիսացող Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) գրասենյակների ցանցը սփռված է երկրի ողջ տարածքում՝ 11 մարզային և 52 համայնքային մասնաճյուղերով, այն ունի ավելի քան 300 փորձառու և նվիրված մասնագետ, ավելի քան 5800 կամավոր և 3000 անդամ: ՀԿԽԸ-ի գործունեության հիմնական ուղղություններն են՝ սոցիալական աջակցությունը, առողջապահությունը, առաջին օգնությունը, որոնում ծառայությունը, աղետների կառավարումը, բնակչության տեղաշարժը, երիտասարդական հիմնախնդիրներին արձագանքը, մարդասիրական արժեքների տարածումը: :

ՀԿԽԸ-ն գործում է նախքան աղետների և առողջապահական արտակարգ իրավիճակների առաջացումը, որպես նախապատրաստում և կանխարգելում, դրանց ընթացքում՝ արձագանքելու և դրանցից հետո՝ խոցելի մարդկանց կարիքները բավարարելու և կյանքը բարելավելու նպատակով: Իր գործունեության ընթացքում ՀԿԽԸ-ն դրսևորում է անկողմնակալություն՝ որևէ խտրականություն չդնելով՝ մարդկանց ազգության, ռասայական պատկանելության, սեռի, կրոնական համոզմունքների, դասակարգային և քաղաքական հայացքների հիմքով: Ղեկավարվելով Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի՝ 2030 թվականի *ռազմավարությամբ*, այն է՝ տասնամյակի մարդասիրական և զարգացման հիմնական մարտահրավերներին դիմակայելու ազգային ընկերությունների գործողությունների հավաքական ծրագրով՝ ՀԿԽԸ-ն հավատարիմ է կյանքեր փրկելու և մարդկանց մտածողությունը փոխելու իր առաքելությանը: ՀԿԽԸ-ի ուժի գրավականն են նրա փորձառու մարդկային ռեսուրսները՝ աշխատակիցներն ու կամավորների մեծ բանակը, ՀՀ ողջ տարածքում գործող ցանցը, հեռավոր համայնքներ հասանելիությունը, համայնքների փորձառությունը:

Համայնքներում իր մշտական ներկայության, մարդասիրական ոլորտում պետական իշխանություններին աջակցող կառույցի իր դերի և երկրի գրեթե բոլոր անկյուններում իր տեղական մասնաճյուղերի և կամավորների ընդարձակ ցանցի շնորհիվ ՀԿԽԸ-ն ունի ցնցումներից և վտանգներից առաջ, դրանց ընթացքում և դրանցից հետո մարդկանց և համայնքներին աջակցելու եզակի հնարավորություն: Հայկական Կարմիր խաչի ընկերության **արժեքների շարքում** են.

Մարդիկ. մենք զարգացնում ենք մարդկանց և համայնքների՝ արդյունավետ աշխատելու կարողությունները՝ նրանց ամենահրատապ կարիքները բավարարելու և նրանց խոցելի դարձնող խնդիրներին կայուն լուծում գտնելու համար:

Ազնվություն. մենք աշխատում ենք թափանցիկ և հաշվետու՝ մեր Հիմնարար սկզբունքներին համապատասխան:

Գործընկերություն. որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ՝ մենք համագործակցում ենք կառավարության և այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ չարատավորելով մեր տարբերանշանը և չվտանգելով մեր հոչակված անկախությունը, անկողմնակալությունը և չեզոքությունը:

Բազմազանություն. խտրականության բացառման և անկողմնակալության, միասնության և համընդհանրության մեր սկզբունքներից ելնելով՝ մենք հարգանքով ենք վերաբերվում մեզ հետ համագործակցող համայնքների, ինչպես նաև՝ մեր կամավորների, անդամների և աշխատակիցներին:

Առաջնորդություն. մենք դրսևորում ենք առաջնորդություն և ձգտում ենք կատարելագործման մեր աշխատանքում՝ ուշադրություն հրավիրելով համայնքների իրավունքներին, կարիքներին և դրանք խոցելի դարձնող խնդիրներին, ինչպես նաև այդ խնդիրների հիմքում ընկած գործոններին:

Նորարարություն. մենք ոգեշնչվում ենք մեր ընդհանուր պատմությունից և ավանդույթներից, բայց միաժամանակ հավատարիմ ենք փոփոխվող աշխարհում մարդկային բարեկեցությանը և արժանապատվությանը սպառնացող խնդիրների համար ստեղծարար և կայուն լուծումներ գտնելու գործին:

Վերջին տասնամյակի ընթացքում տնտեսական, սոցիալական, առողջապահական և աղետների ռիսկի նվազեցման ոլորտներում ի հայտ եկող մարտահրավերներին, սպառնալիքներին և փոփոխություններին դիմակայելու նպատակով Հայկական Կարմիր խաչը, համագործակցելով Միջազգային շարժման, կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, կորպորատիվ հատվածի և միջազգային գործընկերների հետ, իրականացրել է իր նախորդ՝ 2011-2020թթ. Ռազմավարությունը, որը մշակվել է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի 2020 թվականի ռազմավարության հիման վրա և ընդունվել է Հայկական Կարմիր խաչի 22-րդ Գլխավոր ասամբլեայի կողմից 2011 թվականին: Այդ Ռազմավարությունը ծառայել է որպես ուղեցույց անցած տասը տարիների ընթացքում՝ Ազգային ընկերության առաքելությունն իրագործելու և երկրում առկա կարիքները բավարարելու համար:

ՀԿԽԸ-Ի ՆՈՐ՝ 2022-2026թթ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ՝ 2011-2020թթ. Ռազմավարության իրականացման ժամկետի լրանալու բերումով ՀԿԽԸ-ն մշակել է այս նոր Ռազմավարությունը՝ գալիք հինգ տարիների ընթացքում (2022-26թթ.) իր առաքելությունը շարունակելու նպատակով: Ռազմավարությունը մշակվել է Հայաստանում մարտահրավերների և կարիքների հաղթահարմանը նպաստելու և Միջազգային ֆեդերացիայի 2030 թվականի ռազմավարությանը համահունչ:

Ռազմավարությունը նպաստելու է Միջազգային ֆեդերացիայի 2030 թվականի երեք հիմնական նպատակներին՝

Մարդիկ կանխատեսում են ճգնաժամային իրավիճակները, հակազդում են այդ իրավիճակներին և արագ հաղթահարում են հետևանքները:

Մարդիկ ապրում են ապահով, առողջ և արժանապատիվ կյանքով և ունեն բարգավաճման հնարավորություններ:

Մարդիկ նպաստում են ներառական և աջակցող համայնքների կայացմանը:

2022-26թթ. սույն Ռազմավարությունը մշակվել է խիստ մասնակցային (ներքին և արտաքին) հնգամսյա գործընթացի արդյունքում և հիմնված է Փոփոխության տեսության մեթոդաբանության վրա:

Վերջնական Փոփոխության տեսությունը մշակվել է ՀԿԽԸ-ի համատեղ մտագործունեության արդյունքում, ընդ որում՝ ԱԸ-ի բոլոր մակարդակներով գործող հիմնական իրազեկողների և հիմնական շահագրգիռ կողմերի ջանքերով ապահովվել են այս նոր 2022-26թթ. Ռազմավարությունը կազմելու և համաձայնեցնելու համար անհրաժեշտ **առանցքային բաղադրիչները**.

Վերջնական փոփոխության տեսությունը մշակվել է համատեղ քննարկման արդյունքում՝ մասնակցային գործընթացում ներառելով ՀԿԽԸ տարբեր մակարդակներում գործող աշխատակազմին, կամավորներին և հիմնական շահագրգիռ կողմերին, և որոշվել են նոր 2022-2026թթ Ռազմավարության **առանցքային բաղադրիչները**:

- *Հայաստանում տիրող իրավիճակի և առկա հիմնախնդիրների վերլուծությունը՝ ըստ ՀԿԽԸ-ի գործունեության հիմնական ոլորտների*. պատճառները և հետևանքները.
- Հիմնական ոլորտներում ներգրավված Շահագրգիռ կողմերը, նրանց փոխհարաբերությունները միմյանց և ՀԿԽԸ-ի հետ.
- *ՀԿԽԸ-ի սահմանված ցանկալի երկարաժամկետ փոփոխությունը*. ի՞նչ փոփոխություններ ի հայտ կգան խնդիրները լուծելուց հետո.
- *ՀԿԽԸ-ի կիզակետը և շրջանակը*. ո՞ր խնդիրները կհայտնվեն ՀԿԽԸ-ի ռազմավարության կիզակետում.
- *Ազդեցության ուղին*. ՀԿԽԸ-ի քայլերի տրամաբանական հաջորդականությունը աջակցության միջոցառումներից նախանշված երկարաժամկետ փոփոխությանը հասնելու ճանապարհին: Համաձայնեցված փոփոխության տեսությունը ներկայացնող *գծապատկեր*.
- Ակնկալվող դրական և բացասական *չնախատեսված հետևանքների* բացահայտում. ՀԿԽԸ-ի մշտադիտարկման և հետևանքների մեղմացման ռազմավարությունների պարզեցում.
- ՀԿԽԸ-ի խնդիրների և նպատակների իրագործման ազդեցության ուղու տարբեր փուլերում արձանագրվող փոփոխությունների *ժամանակացույցը և հաջորդականությունը*.
- *Ենթադրություններ*. (նախա)պայմաններ, հնարավորություններ և ռիսկեր, որոնք անհրաժեշտ են, կամ որոնցից պետք է խուսափել, որպեսզի ազդեցության ուղին տա ակնկալվող արդյունքը.
- *Նպաստել* առկա հիմնավոր ապացույցների հիման վրա *ռազմավարության և դրա բաղադրիչների մշտադիտարկման, գնահատման և ուսուցման շրջանակի մշակմանը*:

Մեծ ջանքեր պահանջող մասնակցային աշխատանքի արդյունքում կազմվել է Ռազմավարության վերջնական նկարագրական այս փաստաթուղթը: Սույն Ռազմավարությունը հանդիսանում է կից ներկայացված Փոփոխության տեսության գծապատկերի շարադրական նկարագրությունը, որտեղ ներկայացվում է, թե ինչպե՞ս են ակնկալվող ՀԿԽԸ-ի միջոցառումները ազդելու վարքագծի վրա և պայմաններ ստեղծելու առաջիկա հինգ տարիների ընթացքում նախանշված փոփոխության համար:

ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

21-րդ դարն իր հետ բերել է բարդ և փոխկապակցված փոփոխություններ: Մեր Ազգային ընկերությունն ականատես դարձավ ոչ միայն վերջերս Լեռնային Ղարաբաղի հակամարտության

սրացման հետևանքներին և դրանցով պայմանավորված կարիքներին արձագանքելուն, այլն՝ գլոբալ բնույթի մարտահրավերներին, ինչպիսիք են՝ կորոնավիրուսի համավարակը, միլիոնավոր մարդկանց համար օրըստօրե իրականություն դարձող կլիմայական ճգնաժամը և մարդու առողջությունը վտանգող նոր և անսպասելի սպառնալիքները, որոնք նպաստում են բնակչության միգրացիային և տեղաշարժին: ՀԿԽԸ-ն ընդունում է, որ փոփոխության հասնելու համար հարկավոր են նոր մոտեցումներ, և Ազգային ընկերությունը պարտավոր է արդյունավետ օգտագործել իրեն հասանելի հնարավորությունները և ռեսուրսները:

ՀԿԽԸ-ի նոր՝ 2022-26թթ. Ռազմավարությունը սահմանում է այն փոփոխությունները, որոնք կբարելավեն մեր Ազգային ընկերության՝ կյանքեր փրկելու ունակությունները և կաջակցեն հայ ժողովրդի հմտությունների ու կարողությունների ամրապնդմանն ուղղված ջանքերին: Այս նպատակներն իրագործելու համար՝ մեր նոր Ռազմավարությունն առաջարկում է մի շարք վերափոխումներ՝ մարտահրավեր նետելով մեր ընկերության աշխատակիցներին, կամավորներին և անդամներին, որպեսզի նրանք մտածեն նաև առկա իրավիճակի շրջանակներից դուրս, այն է՝ զարգացնեն ոչ կարծրատիպային մտածողությունը:

Այս նոր՝ 2022-26թթ. Ռազմավարությամբ ՀԿԽԸ-ն ցանկանում է *հասնել կայունության սահմանների*՝ անհատների և համայնքների՝ բարգավաճման հնարավորությունն ապահովելու համար: Այս Ռազմավարությունում առաջարկվում է փոփոխությունների կենտրոնական դերը հատկացնել տեղական համայնքներին՝ այդպիսով ներգրավելով համայնքները տեղական, պետական և միջազգային կառույցների հետ համատեղ աշխատանքում:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում ՀԿԽԸ-ն շարունակելու է իր աշխատանքները կազմակերպել որպես բաշխված մասնաճյուղերի ցանց հանդիսացող կառույց, այսինքն՝ ճկուն փոխկապակցված այնպիսի մասնաճյուղերի ցանց, որոնք կարող են շատ արդյունավետ համագործակցել, սովորել և գործել միասին: Այս նոր ռազմավարությունում կարևորվում է նաև բազում գործընկերների և դերակատարների հետ ազգային ընկերության գործակցությունը:

ՀԿԽԸ-ի աշխատանքը միշտ խարսխված է եղել կամավորական գործունեության խորին և հզոր ոգու վրա: Մույն 2022-26թթ. Ռազմավարությունը նույնպես հիմք է ընդունում ՀԿԽԸ-ի կամավորների բազմազանությունը և կարողությունները՝ խթանելով բոլոր այն մարդկանց ներգրավումը և զարգացումը, ովքեր կիսում են Կարմիր խաչի արժեքները: Իր Ռազմավարությամբ ՀԿԽԸ-ն նաև ձեռնամուխ է լինում իրականացնել շարունակական թվային վերափոխում՝ հանրային ուսուցումը, մտավոր կարողությունները և գործունեությունը պարզեցնելու համար: Հայկական Կարմիր խաչի ընկերության արժեքներն ու սկզբունքները հզոր ուժ են ներկայացնում հանրության համար, իսկ նմանը չունեցող կամավորական կազմը հանձն է առել դրական փոփոխություններ առաջ բերել ողջ երկրի տարածքում:

2022-2026թթ. ՀԿԽԸ-ի ռազմավարական նպատակներն արմատավորված են Հիմնարար սկզբունքներում և համահունչ են Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման բոլոր անդամների նպատակներին և ԿԽՄՖ-ի 2030 թվականի ռազմավարությանը: Այդ նպատակներով խրախուսվում են համաաշխարհային մարդասիրական և զարգացման հիմնական շրջանակները, ներառյալ՝ «Կայուն զարգացման նպատակները», Ադետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողությունների ծրագիրը, Միգրացիայի և փախստականների վերաբերյալ գլոբալ համաձայնագիրը, Առողջապահության միջազգային կանոնակարգերը և Կլիմայի փոփոխության վերաբերյալ Փարիզյան համաձայնագիրը, ինչպես նաև՝ այլ հիմնական համաձայնագրերը և դաշնագրերը, որոնց հետևում է Ազգային ընկերությունը, և որոնցում իրենց հստակ և անմիջական ներդրումն ունեն Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ազգային ընկերությունները:

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ: Նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ: Ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

1.-ԵՐԿՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ. ԱՂԵՏՆԵՐ

Հայաստանը լեռնային երկիր է, որը բնութագրվում է բնապատկերների բազմազանությամբ և երկրաբանական անկայունությամբ: Միջին բարձրությունը կազմում է ծովի մակարդակից 1800 մետր: Հարթավայրեր չկան: Երկրի տարածքի կեսը գտնվում է 1000-2000 մետր բարձրությունների միջակայքում: Նման կտրտված բնապատկերի, ինչպես նաև՝ տարբեր կենսաաշխարհագրական շրջանների հատման հանգույցում բարձրավանդակի գտնվելու հանգամանքի բերումով առաջացել է բնապատկերների բազմազանություն: Հայաստանում հոսող բազմաթիվ գետերը կարճ են և փոթորկուն՝ բազմաթիվ սահանքներով և ջրվեժներով: Ջրի մակարդակն ամենաբարձրն է գարնանը՝ ձնհալի ժամանակ, և աշնանային անձրևների ժամանակ:

Երկրի կլիման չոր և մայրցամաքային է. ամառները երկար և շոգ են, օդի ջերմաստիճանը երբեմն սովորականից շատ է բարձրանում, իսկ ձմեռները հիմնականում ցրտաշունչ են, հատկապես՝ լեռնային շրջաններում (միջինում 12°C): Արկտիկական օդային հոսանքների ներհոսքը երբեմն հանգեցնում է ջերմաստիճանի կտրուկ անկման: Երկրի տարածքում պատահում են սողանքներ, հատկապես՝ մարտ-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին առատ անձրևների ժամանակ: Ձմռանը՝ դեկտեմբերից փետրվար ամիսներին, լինում են ձյան առատ տեղումներ:

Հայաստանը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում. երկրում հաճախակի լինում են փոքր ցնցումներ, և կարող է լինել ուժեղ երկրաշարժ, օրինակ՝ 1988թ. դեկտեմբերին եղել է 7,2 մագնիտուդով երկրաշարժ, որը մի քանի հազար մարդու կյանք խլեց երկրի հյուսիսային մասում գտնվող Սպիտակ, Գյումրի և Վանաձոր քաղաքներում:

Երկրի առջև կանգնած մնացած ռիսկերը պայմանավորված են հետևյալ գործոններով՝ հողի աղտոտում թունավոր քիմիական նյութերով (օրինակ՝ ԴԴՏ), անտառահատում, Հրազդան և Արաքս գետերի աղտոտում, Սևանա լճի ցամաքեցում այն որպես հիդրոէլեկտրակայանի աղբյուր օգտագործելու հետևանքով, ինչը սպառնալիք է ստեղծում խմելու ջրի պաշարների համար և սեյսմիկ ակտիվ գոտում գտնվող Մեծամորի ատոմակայանի վերագործարկում:

Ավելին, Հայաստանում դժբախտ պատահարների հետևանքով զոհերի կեսի մահվան պատճառը ճանապարհատրաստապարտային պատահարներն են, որոնք մահացու են դառնում տարեկան մոտ 300 մարդու համար՝ կազմելով աղետների և արտակարգ իրավիճակների հետևանքով տարեկան մահացության դեպքերի գրեթե 80 տոկոսը:

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանը համարվում է աշխարհի ամենաաղետավտանգ երկրներից մեկը: Այն ենթակա է բոլոր տեսակի աղետների, բացառությամբ՝ ծովի հետ կապված աղետների: Ուժեղ երկրաշարժերը, հաճախակի պատահող սողանքները, կարկտահարությունները, երաշտը, ուժեղ քամիները և ջրհեղեղները՝ հակամարտության սրման մշտական վտանգի հետ մեկտեղ, սպառնում են

մարդկանց անվտանգությանը և նշանակալի վնասներ են պատճառում՝ խոչընդոտելով երկրի կայուն զարգացմանը:

1-ԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

«Հայաստանի բնակչությունն ավելի լավ է կանխատեսում աղետները և ճգնաժամային իրավիճակները, հակազդում է դրանց և ավելի արագ է հաղթահարում դրանց հետևանքները»:

Երկրի առջև մշտապես ծառայած մարտահրավերների պայմաններում աղետին հակազդելն այլևս բավարար չէ: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը պետք է անի հնարավորինս վերացնելու աղետների և ճգնաժամային իրավիճակների հիմքում ընկած պատճառները և հասկանա խոցելիության փոփոխվող բնույթը՝ դրանց ազդեցությունը նվազեցնելու, հաճախակի ռիսկերին ավելի ճիշտ հակազդելու կամ անգամ դրանց առաջացումը կանխելու համար:

Այս ռազմավարական նպատակի իրագործմանը նպաստելու համար՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կմեծացնի հակազդման և պատրաստվածության մասով տեղական կարողությունները՝ լրացուցիչ միջազգային աջակցության կառուցակարգերի հետ մեկտեղ, որպեսզի իր մասնաճյուղային ցանցը կարողանա արդյունավետ հակազդել ցանկացած արտակարգ իրավիճակի Հայաստանի ցանկացած անկյունում:

1-ԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ. ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Ռազմավարական նպատակի իրագործմանը նպաստելու համար՝ ՀԿԽԸ-ն աշխատանք կտանի հետևյալ ուղղությամբ.

1. Հայաստանի համայնքներն ունեն բարձր մակարդակի դիմակայունություն և պատշաճ կերպով պատրաստված են աղետին հակազդելու համար:

Այս ռազմավարական խնդիրն իրագործելու համար՝ ՀԿԽԸ-ն կապահովի հետևյալը.

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1.1 Աղետավտանգ/ճգնաժամային գոտիներում գտնվող համայնքների թիրախային բնակչության՝ աղետների ռիսկերի և անվտանգ վարքագծի կանոնների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում

Միջամտության ուղղություն

Աղետների ռիսկերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության և պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ՀԿԽԸ-ն կիրականացնի «Ռիսկերի ուսուցում և անվտանգ վարքագիծ» ուսումնական ծրագիրը:

Ցուցանիշներ

1.1.1 2026 թվականի տարեվերջի դրությամբ ՀԿԽԸ-ի իրազեկման և աղետներին պատրաստվածության միջոցառումներում կընդգրկվի առնվազն 550.000 մարդ:

1.1.2 Աղետների ռիսկերի և անվտանգ վարքագծի կանոնների մասին իրազեկված թիրախային բնակչության թիվն ավելացել է առնվազն 60 տոկոսով:

1.2 Պետական մակարդակով աղետների կանխատեսման և վաղ ահազանգման համակարգերի մշակում և գործարկում

Միջամտության ուղղություն

Աղետների կանխատեսման և վաղ ահազանգման արդյունավետ համակարգ ունենալու համար կանոնավոր հաղորդակցություն է հաստատվել Արտակարգ իրավիճակների նախարարության և տեղական փրկարարական ծառայությունների հետ, և կապ է հաստատվել Ստեփանավանի Արտակարգ իրավիճակների արձագանքման և հումանիտար աշխատանքների համակարգման և Տավուշի դիմակայունության կենտրոնի հետ: Ժողովների/աշխատաժողովների ընթացքում իրականացվում են թիրախային համայնքներում պասիվ պաշտպանական միջոցառումների և հատկապես աղետների վաղ ահազանգման համակարգերի ստեղծման մասով շահապաշտպանության (ադվոկացիա) միջոցառումներ:

Ցուցանիշ

1.1.1 Արտակարգ իրավիճակների նախարարության/ տեղական փրկարարական ծառայությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տարեկան 4 ժողովների և տարեկան մեկ անգամ անցկացվող աշխատաժողովների ընթացքում իրականացվում են թիրախային համայնքներում պասիվ պաշտպանական միջոցառումների և հատկապես՝ աղետների վաղ ահազանգման համակարգերի ստեղծման շահապաշտպանության (ադվոկացիա) միջոցառումներ:

1.3 ՀԿԽԸ-ի Աղետներին արձագանքման թիմերը (այսուհետ՝ ԱԱԹ-ներ) պատշաճ կերպով պատրաստված և հանդերձավորված են աղետների դեպքում առաջին արձագանքող միջոցառումները ձեռնարկելու համար:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն տեսական դասընթացների վրա հիմնված և գործնական վարժություններով համալրված կրթական ծրագրի միջոցով կզարգացնի իր ԱԱԹ-ների կազմում ներառված կամավոր-հրահանգիչների՝ աղետներին արձագանքելու կարողությունները:

Ցուցանիշներ

1.1.2 Եվս 6 մարզում ՀԿԽԸ-ի ԱԱԹ-ների կազմավորում.

1.1.3 ՀԿԽԸ-ի ԱԱԹ-ների անդամների առնվազն 80 տոկոսի՝ աղետներին արձագանքելու կարողությունների բարելավում:

1.4 Համայնքահեն դիմակայուն հաստատություններն ունակ են կարևորագույն ծառայություններ մատուցել աղետի դեպքում:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր Տավուշի մարզում գտնվող իր Դիմակայունության կենտրոնի կարողությունների բարելավման ուղղությամբ, որպեսզի այն կարողանա կարևորագույն ծառայություններ և աջակցություն տրամադրել այլ համայնքային հաստատություններին:

Ցուցանիշ

1.4.1 Համայնքային հաստատությունների առնվազն 50 տոկոսը բարելավել են իրենց՝ աղետներին դիմակայելու և պատրաստվածության կարողությունները:

1.5 Ինչպես պետական, այնպես էլ համայնքային մակարդակով գործող ՀԿԽԸ-ի արտակարգ իրավիճակների պահեստները հազեցած են անհրաժեշտ պարագաներով:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կհաստատի գործընկերային հարաբերություններ և կուժեղացնի ռեսուրսների մոբիլիզացման ջանքերը արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ պարագաների կայուն պաշարների առկայությունն ապահովելու համար:

Ցուցանիշ

1.5.1 ՀԿԽԸ-ի արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ պարագաների պահեստների 80 տոկոսը (մեկական պահեստ երկրի հյուսիսային, կենտրոնական և հարավային մասերում) հազեցած են անհրաժեշտ պարագաներով և հասանելի են ՀԿԽԸ-ի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի համար:

ԱՎՆԿԱԼ ՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻՆՔ/ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ
-------------	--------------------------------------	---	-----------------------------------

<p>1.1.1 2026 թվականի տարեվերջի դրությամբ ՀԿԽԸ-ի իրազեկման և աղետների պատրաստվածության միջոցառումներում կընդգրկվի առնվազն 550.000 մարդ:</p> <p>1.1.2 Աղետների ռիսկերի և անվտանգ վարքագծի կանոնների մասին իրազեկված թիրախային բնակչության թիվն ավելացել է առնվազն 60 տոկոսով:</p> <p>1.2.1 Աղետների վաղ ահազանգման համակարգերի ստեղծման շահապաշտպանության (ադվոկացիա) միջոցառումների կազմակերպում:</p> <p>1.3.1. Եվս 6 մարզում ՀԿԽԸ-ի ԱԱԹ-ների կազմավորում.</p> <p>1.3.2 ՀԿԽԸ-ի ԱԱԹ-ների անդամների առնվազն 80 տոկոսի՝ աղետներին արձագանքելու կարողությունների բարելավում.</p> <p>1.4.1 Համայնքային հաստատությունների առնվազն 50 տոկոսը բարելավել են իրենց աղետներին դիմակայելու և պատրաստվածության կարողությունները:</p> <p>1.5.1 ՀԿԽԸ-ի արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ պարագաների պահեստների 80 տոկոսը (մեկական պահեստերկրի հյուսիսային, կենտրոնական և հարավային մասերում) հազեցած են անհրաժեշտ պարագաներով և հասանելի են ՀԿԽԸ-ի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի համար:</p>	<p>1.1 Հարցումներ, հասանելի հրապարակումներ և մասնակիցների ցուցակներ.</p> <p>1.2. Միջոցառումների արձանագրություններ.</p> <p>1.3. Կամավորների տվյալների բազա, Գրանցամատյաններ, Թվային տվյալների բազա.</p> <p>1.4. Մասնակիցների ցուցակներ և գործնական վարժությունների, ուսումնավարժանքների ի լուսանկարներ.</p> <p>1.5. Պահեստներում առկա սարքավորումների և ապրանքի/պարագաների գույքացուցակ /Գույքագրման հաշվետվություն</p>	<p>1.1. Ելակետային և վերջնական հետազոտություններ և եռամսյակային զեկույցներ.</p> <p>1.2. 8=9 հաշվետվություններ.</p> <p>1.3. Թարմացված տվյալների բազա.</p> <p>1.4. Նկարագրական զեկույցներ՝ ըստ իրադարձության.</p> <p>1.5. Գույքագրման ամսական մշտադիտարկում</p>	<p>Աղետների կառավարման բաժնի պետ</p> <p>Աղետների կառավարման բաժնի համակարգողներ և արտաքին հետազոտողներ</p>
---	---	---	--

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ

Հայաստանում աղետներին պատրաստվածության ոլորտում գործում են համապատասխան շահագրգիռ կողմեր, ովքեր ունեն նմանօրինակ հետաքրքրություններ, իրականացնում են նմանօրինակ գործունեություն և անգամ ունեն նույն հնարավոր թիրախային խմբերը, ինչ ՀԿԽԸ-ն: Ազգային ընկերությունը պետք է ջանքեր գործադրի այդ շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրի հետ իր հաստատված փոխհարաբերությունները և համագործակցությունը պահպանելու և (կամ) նրանց հետ փոխհարաբերություններ և համագործակցություն հաստատելու ուղղությամբ՝ նրանց և իր կողմից նույն աշխատանքի կատարումը կամ աշխատանքի կրկնությունը բացառելու և ակնկալվող արդյունքների ու նախանշված փոփոխության արդյունավետ իրականացմանը նպաստելու ուղղությամբ համատեղ ջանքերն առավելագույնի հասցնելու համար: Այս նպատակի մասով բացահայտված հիմնական

շահագրգիռ կողմերն են՝ պետական մարմինների շրջանում՝ Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Տարածքային կառավարման նախարարությունը, Կրթության նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների շրջանում՝ ՄԱԶԾ-ն:

ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Առկա են մի քանի գործոններ, որոնք կարող են հնարավորություն տալ ՀԿԽԸ-ին ստանալ վերոնշյալ ակնկալվող արդյունքները և նպաստել իր ռազմավարական խնդրի և նպատակի իրագործմանը. Ազգային ընկերությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի նպաստի այդ գործոնների առաջացմանը, ինչը հնարավորություն կտա հասնել ռազմավարական փոփոխության: Այս առումով կարևոր նախապայմաններն են.

1. ՀԿԽԸ-ի հիմնական դերակատարների և Հայաստանում աղետների պատրաստվածությունը բարելավելու գործում ներգրավված ԱԸ-ի գործընկերների մոբիլիզացում.
2. Սոցիալական ցանցերում հաղորդակցման գործիքների բարելավում և բոլոր մակարդակներով կարևոր տեղեկատվության արդյունավետ տարածում.
3. ՀԿԽԸ-ի Ռեսուրսների մոբիլիզացման ուղղությամբ արդյունավետ աշխատանք (թվային և կորպորատիվ) տանելը:

Միևնույն ժամանակ, ՀԿԽԸ-ն պետք է լինի իրազեկ և ձեռնարկի կանխարգելիչ միջոցներ՝ ակնկալվող արդյունքներին հասնելու գործընթացը բարդացնող կամ անհնարին դարձնող վերհանված ռիսկերի և խոչընդոտների առաջացման հավանականությունը նվազեցնելու համար.

1. Ակնկալվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ նախատեսված ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցների և ֆինանսավորման հնարավորությունների բացակայությունը.
2. Ակնկալվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ ծրագրերի իրականացման համար պահանջվող կամավորների և վերապատրաստված հրահանգիչների ռոտացիա.
3. Հայաստանում նոր կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) համավարակի պահպանմամբ կամ հնարավոր վատթարացող հետևանքներով առաջացած չնախատեսված խոչընդոտներ և դժվարություններ:

2-ՐԴ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱԿԱԶԴՈՒՄ ԱՂԵՏԻՆ

2. ՀԿԽԸ-ն ունի աղետների արձագանքման լավ պատրաստված և արդյունավետ կառույցներ տեղական և ազգային մակարդակներում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1. ՀԿԽԸ-ն ունակ է ժամանակին և արդյունավետ արձագանքել աղետներից տուժած մարդկանց կարիքներին:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր՝ իր Մասնաճյուղերի ցանցի կարողությունները զարգացնելու համար, որպեսզի նրանք կարողանան արագ և արդյունավետ արձագանքել աղետների դեպքում:

Ցուցանիշ

2.1.1 ՀԿԽԸ-ի Աղետներին արձագանքման թիվերն (ԱԱԹ) արդյունավետ գործում են աղետից տուժած բոլոր մարզերում և համայնքներում:

2.2 ՀԿԽԸ-ի Աղետներին արձագանքման թիվերը պատշաճ կերպով հանդերձավորված և վերապատրաստված են աղետի դեպքում աղետի գոտում արագ տեղակայվելու և աղետին արդյունավետորեն արձագանքելու համար:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր՝ իր Աղետներին արձագանքող թիվերի կարողությունները զարգացնելու և հանդերձանքը բարելավելու համար, որպեսզի նրանք կարողանան արագ և արդյունավետ արձագանքել աղետի դեպքում:

Ցուցանիշ

2.2.1 ՀԿԽԸ-ի ԱԱԹ-ների անդամների առնվազն 80 տոկոսի՝ աղետներին արձագանքելու կարողությունների բարելավում

2.3 ՀԿԽԸ-ի Որոնում ծառայությունը բավարար կարողություններ և ռեսուրսներ ունի աղետներից տուժած բնակչության շրջանում ընտանեկան կապերի վերականգնում իրականացնելու համար:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր՝ իր **Որոնում ծառայության** կարողությունները և ռեսուրսները զարգացնելու համար՝ աղետներից/ճգնաժամերից տուժած մարդկանց ընտանեկան կապերի վերականգնման մասով արդյունավետ ծառայությունների տրամադրումն ապահովելու նպատակով:

Ցուցանիշ

2.3.1 ՀԿԽԸ-ի ԱԱԹ-ների անդամների առնվազն 80 տոկոսի՝ ընտանեկան կապերի վերականգնման ծրագրի մասով կարողությունների բարելավում

2.4 ՀԿԽԸ-ն շարունակաբար հոգեկան առողջության պահպանման և սոցիալիզացիայի հետևանքով անհետ կորածների ընտանիքի անդամներին:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի իր կարողությունների և ռեսուրսների պահպանմանն ուղղված ծրագիր, որպեսզի կարողանա հոգեկան առողջության պահպանման և սցիալիոգեբանական աջակցության արդյունավետ ծառայություններ մատուցել աղետների/հակամարտությունների հետևանքով անհետ կորածների ընտանիքներին:

Ցուցանիշ

2.4.1 Անհետ կորածների ընտանիքների առնվազն 70 տոկոսն ստացել են հոգեկան առողջության պահպանման և սցիալիոգեբանական աջակցության արդյունավետ ծառայություններ:

2.5 ՀԿԽԸ-ն ունի բավարար ռեսուրսներ՝ աղետից տուժած մարդկանց կենսապայմանների ֆարեղավմանը նպաստելու համար:

Միջամտության ուղղություն

Աջակցել թիրախային բնակչությանը՝ խթանելով ինքնաապահովմանն ու եկամտաբեր գործունեություն սկսելուն ուղղված նրանց ջանքերը և աջակցելով նրանց աշխատանքի տեղավորմանը՝ նրանց համար կենսաապահովման հասանելիությունն ապահովելու համար:

Ցուցանիշ

2.5.1 Աղետից տուժած ընտանիքների առնվազն 80 տոկոսն ապահովված են նվազագույն կենսապայմաններով:

ԱԸ-ի համար արդյունավետ գործելակերպ է կանխիկի և վաուչերային աջակցության տրամադրելը: ԼՂ ճգնաժամից հետո, միանալով ՀՀ Կառավարության կանխիկ աջակցության ծրագրերին՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանված անձանց և հյուրընկալող ընտանիքներին 2020-2022թթ. ընդհանուր առմամբ տրամադրել է 2 միլիարդ 828 միլիոն 880 հազար 696 ՀՀ դրամ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻՆՔ/ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ
2.1. ՀԿԽԸ-ի Աղետներին արձագանքման թիմերն (ԱԱԹ) արդյունավետորեն գործում են աղետից տուժած բոլոր մարզերում և համայնքներում:	2.1 Հրապարակումներ և պաշտոնական տվյալների բազա.	2.1 Եռամսյակային մշտադիտարկման զեկույցներ.	Որոնում ծառայության ղեկավար.
2.2. ՀԿԽԸ-ի ԱԱԹ-ների անդամների առնվազն 80 տոկոսի՝	2.2 Ուսումնավարժանքների մասին զեկույցներ, մասնակիցների ցուցակներ, վարժանքներից առաջ և	2.2 Նկարագրական զեկույցներ՝ ըստ իրադարձության.	Աղետների կառավարման բաժնի ղեկավար և համակարգողներ.

<p>աղետներին արձագանքելու կարողությունների բարելավում. 2.3. ՀԿԽԸ-ի ԱԱԹ-ների անդամների առնվազն 80 տոկոսի՝ ընտանեկան կապերի վերականգնման ծրագրի մասով կարողությունների բարելավում. 2.4. Անհետ կորածների ընտանիքների առնվազն 70 տոկոսն ստացել են հոգեկան առողջության պահպանման և սոցիալ հոգեբանական աջակցության արդյունավետ ծառայություններ: 2.5. Աղետից տուժած ընտանիքների առնվազն 80 տոկոսն ապահովված են նվազագույն կենսապայմաններով:</p>	<p>հետո անցկացվող ստուգումներ. 2.3 Ուսումնավարժանքների մասին զեկույցներ, մասնակիցների ցուցակներ, վարժանքներից առաջ և հետո անցկացվող ստուգումներ. 2.4 Անհետ կորած անձանց մասին առկա պաշտոնական տվյալներ և կառավարության զեկույցներ. 2.5 Հանձնման և ընդունման ակտեր և շահառուների տվյալների բազա</p>	<p>2.3 Նկարագրական զեկույցներ՝ ըստ իրադարձության. 2.4 Կանոնավոր մշտադիտարկում. 2.5 Պետական կառավարման մարմիններից պաշտոնական տվյալների ստացում</p>	<p>Աղետներին արձագանքման թիմերի ղեկավարներ (մասնաճյուղերի մակարդակով). Առաջին օգնության բաժնի ղեկավար. Հոգեկան առողջության պահպանման և սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայության համակարգող</p>
--	--	--	--

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ

Հայաստանի աղետներին արձագանքման ոլորտում գործում են համապատասխան շահագրգիռ կողմեր, ովքեր ունեն նմանօրինակ հետաքրքրություններ, իրականացնում են նմանօրինակ գործունեություն և անգամ ունեն նույն հնարավոր թիրախային խմբերը, ինչ ՀԿԽԸ-ն: Ազգային ընկերությունը պետք է ջանքեր գործադրի այդ շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրի հետ իր հաստատված փոխհարաբերությունները և համագործակցությունը պահպանելու և (կամ) նրանց հետ փոխհարաբերություններ և համագործակցություն հաստատելու ուղղությամբ՝ նրանց և իր կողմից նույն աշխատանքի կատարումը կամ աշխատանքի կրկնությունը բացառելու և ակնկալվող արդյունքների ու նախանշված փոփոխության արդյունավետ իրականացմանը նպաստելու ուղղությամբ համատեղ ջանքերն առավելագույնի հասցնելու համար: Այս նպատակի մասով բացահայտված հիմնական շահագրգիռ կողմերն են՝ պետական մարմինների շրջանում՝ Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Արդարադատության նախարարությունը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Տարածքային կառավարման նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների շրջանում՝ ՄԱԶԾ-ն և Կարմիր խաչի միջազգային կոմիտեն:

ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Առկա են մի քանի գործոններ, որոնք կարող են հնարավորություն տալ ՀԿԽԸ-ին ստանալ վերոնշյալ ակնկալվող արդյունքները և նպաստել իր ռազմավարական խնդրի և նպատակի իրագործմանը. Ազգային ընկերությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի նպաստի այդ գործոնների առաջացմանը, ինչը հնարավորություն կտա հասնել ռազմավարական փոփոխության: Այս առումով կարևոր նախապայմաններն են.

1. ՀԿԽԸ-ի և ազգային ու միջազգային մակարդակներով գործող հիմնական շահագրգիռ կողմերի միջև լավ մասնագիտական և համագործակցային հարաբերությունների պահպանում.
2. անհրաժեշտ ծրագրերն իրականացնելու համար պատշաճ կերպով պատրաստված արհեստավարժ աշխատողների առկայություն.
3. արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ պարագաներով հագեցած պահեստների ապահովում.
4. ՀԿԽԸ-ի ռեսուրսների մոբիլիզացման ուղղությամբ արդյունավետ աշխատանք (թվային և կորպորատիվ) տանելը.
5. սոցիալական ցանցերում հաղորդակցման գործիքների բարելավում:

Միևնույն ժամանակ, ՀԿԽԸ-ն պետք է լինի իրազեկ և ձեռնարկի կանխարգելիչ միջոցներ՝ ակնկալվող արդյունքներին հասնելու գործընթացը բարդացնող կամ անհնարին դարձնող վերհանված ռիսկերի և խոչընդոտների առաջացման հավանականությունը նվազեցնելու համար.

1. նախատեսված ծրագրերն ամբողջությամբ իրականացնելու համար ՀԿԽԸ-ի մոտ անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ֆինանսավորման հնարավորությունների բացակայություն.
2. տրանսպորտային ծառայություններ մատուցողների գերծանրաբեռնվածության հետևանքով տրանսպորտային միջոցների պակաս.
3. ընտանեկան կապերի վերականգնմանն ուղղված գործունեության շրջանակներում իրավասու պետական հաստատությունների հետ համագործակցության և տեղեկատվության փոխանակման հետ կապված խնդիրներ.
4. կամավորների ռոտացիայի բարձր մակարդակ և նախատեսված ծրագրերի իրականացմանն աջակցող անձնակազմի պակաս.
5. սահմանների արգելափակման վտանգի (արտակարգ իրավիճակներում) հետևանքով հիմնական պարագաների պակաս:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ 3. ՆՊԱՍՏԵԼ ԱՂԵՏԻՑ ՀԵՏՈ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆԸ

Ռազմավարական նպատակի իրագործմանը նպաստելու համար՝ ՀԿԽԸ-ն աշխատանք կտանի նաև հետևյալ ուղղությամբ.

3. Դիմակայուն ենթակառուցվածքների շնորհիվ կարևորագույն ծառայություններն ավելի հասանելի են դառնում աղետից տուժած բնակչությանը:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐ

3.1 ՀԿԽԸ-ն նպաստել է աղետից տուժած համայնքներում արդյունավետ և գործող հաղորդակցության համակարգերի մշակմանը ու բարելավմանը:

Ցուցանիշ

3.1.1 Աղետի հետևանքով վնասված հաղորդակցության համակարգերի առնվազն 20 տոկոսը վերականգնվել է:

3.2 Աղետից տուժած համայնքների համար մաքուր խմելու ջրի հասանելիության մակարդակի բարձրացում.

Ցուցանիշ

3.2.1 Աղետից տուժած յուրաքանչյուր համայնքում արդյունավետորեն գործում է առնվազն 1 խմելու ջրագիծ:

3.3 Աղետից տուժած համայնքները բարելավել են էլեկտրաէներգիայի հետ կապված հիմնական կարիքները հոգալու իրենց կարողությունները (օրինակ՝ արևային և էլեկտրական համակարգեր):

Ցուցանիշներ

3.3.1 Աղետից տուժած համայնքներում թիրախային մարդկանց առնվազն 30 տոկոսին հասանելի է բավարար էլեկտրաէներգիա՝ իրենց հիմնական կարիքները հոգալու համար:

3.3.2 Աղետից տուժած համայնքների առնվազն 50 տոկոսում տեղադրվել են արևային մարտկոցներ:

Միջամտության ուղղություն

3.1, 3.2 և 3.3 ակնկալվող արդյունքները ստանալու համար՝ աղետի դեպքում ՀԿԽԸ-ն աղետից տուժած համայնքներում կիրականացնի խոցելիության և կարողությունների գնահատում և ստացված արդյունքների հիման վրա կմշակի համապատասխան ծրագրեր և գործողություններ՝ հայտնաբերված կարիքներին արձագանքելու համար:

ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ ԵՎ ՀԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻՆՔ/ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒՆԵՐ
<p>3.1.1 Աղետի հետևանքով վնասված հաղորդակցության համակարգերի առնվազն 20 տոկոսը վերականգնվել է:</p> <p>3.2.1 Աղետից տուժած յուրաքանչյուր համայնքում արդյունավետորեն գործում է առնվազն 1 խմելու ջրագիծ:</p> <p>3.3.1 Աղետից տուժած համայնքներում թիրախային մարդկանց առնվազն 30 տոկոսին հասանելի է բավարար էլեկտրաէներգիա՝ իրենց հիմնական կարիքները հոգալու համար:</p> <p>3.3.2 Աղետից տուժած համայնքների առնվազն 50 տոկոսում տեղադրվել են արևային մարտկոցներ:</p>	<p>3.1 Հասանելի Գործառնական զեկույցներ.</p> <p>3.2 Հասանելի Գործառնական զեկույցներ.</p> <p>3.3 Գնումների հաշիվ-ապրանքագրեր և հասանելի Գործառնական զեկույցներ</p>	<p>3.1 Եռամսյակային զեկույցներ.</p> <p>3.2 Եռամսյակային զեկույցներ.</p> <p>3.3 Եռամսյակային զեկույցներ</p>	<p>Աղետների կառավարման բաժնի ղեկավար, Աղետների կառավարման բաժնի համակարգող.</p> <p>ՀԿԽԸ-ի Մարզային մասնաճյուղերի նախագահներ</p>

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՈՒ ԿՈՂՄԵՐԸ

Հայաստանում աղետից հետո վերականգնման ոլորտում գործում են համապատասխան շահագրգիռ կողմեր, ովքեր ունեն նմանօրինակ հետաքրքրություններ, իրականացնում են նմանօրինակ գործունեություն և անգամ ունեն նույն հնարավոր թիրախային խմբերը, ինչ ՀԿԽԸ-ն: Ազգային

ընկերությունը պետք է ջանքեր գործադրի այդ շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրի հետ իր հաստատված փոխհարաբերությունները և համագործակցությունը պահպանելու և (կամ) նրանց հետ փոխհարաբերություններ և համագործակցություն հաստատելու ուղղությամբ՝ նրանց և իր կողմից նույն աշխատանքի կատարումը կամ աշխատանքի կրկնությունը բացառելու և ակնկալվող արդյունքների ու նախանշված փոփոխության արդյունավետ իրականացմանը նպաստելու ուղղությամբ համատեղ ջանքերն առավելագույնի հասցնելու համար: Այս նպատակի մասով բացահայտված հիմնական շահագրգիռ կողմերն են՝ պետական մարմինների շրջանում՝ Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Կրթության նախարարությունը, Տարածքային կառավարման նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ մասնավոր հատվածում՝ ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարները, արևային մարտկոցներ արտադրող ընկերությունները և շինարարական ընկերությունները:

ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Առկա են մի քանի գործոններ, որոնք կարող են հնարավորություն տալ ՀԿԽԸ-ին ստանալ վերոնշյալ ակնկալվող արդյունքները և նպաստել իր ռազմավարական խնդրի և նպատակի իրագործմանը. Ազգային ընկերությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի նպաստի այդ գործոնների առաջացմանը, ինչը հնարավորություն կտա հասնել ռազմավարական փոփոխության: Այս առումով կարևոր նախապայմաններն են.

1. Երկրում գործող առավել արհեստավարժ ընկերությունների, կազմակերպությունների և մասնագետների կողմից ՀԿԽԸ-ի ծրագրերի իրականացմանը նպաստելը.
2. Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների առկայությունը.
3. ՀԿԽԸ-ի ռեսուրսների մոբիլիզացման ուղղությամբ արդյունավետ աշխատանք (թվային և կորպորատիվ) տանելը.
4. **սոցիալական ցանցերում հաղորդակցման գործիքների ակտիվ կիրառում**

Մինևույն ժամանակ, ՀԿԽԸ-ն պետք է լինի իրազեկ և ձեռնարկի կանխարգելիչ միջոցներ՝ ակնկալվող արդյունքներին հասնելու գործընթացը բարդացնող կամ անհնարին դարձնող վերհանված ռիսկերի և խոչընդոտների առաջացման հավանականությունը նվազեցնելու համար.

1. նախատեսված ծրագրերն ամբողջությամբ իրականացնելու համար ՀԿԽԸ-ի մոտ անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ֆինանսավորման հնարավորությունների բացակայություն.
2. սահմանների արգելափակման վտանգի (արտակարգ իրավիճակներում) հետևանքով շինանյութի պակաս:
3. նախատեսված ծրագրերի իրականացման համար պահանջվող մասնագիտացված Արհեստավարժ աշխատողների (ինժեներներ, էլեկտրիկներ, վարորդներ և այլն) պակաս:

2. ԵՐԿՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Անցած երկու տասնամյակների ընթացքում Առողջապահության նախարարությունը զգալի առաջընթաց է արձանագրել առաջնային բուժօգնության ցանցի բարեփոխման և ամրապնդման, վարակիչ հիվանդությունների վերահսկման, առողջապահական համակարգի օպտիմալացման և առողջապահական հաստատությունների արդիականացման գործում: Դժբախտաբար, հանրային

առողջապահության ծախսերին հատկացվող գումարների սակավության և պահանջարկի հիման վրա առողջապահության ֆինանսավորման մասով բարեփոխման անավարտ մնալու հետևանքով ֆինանսական ռիսկերը կանխելու հետ կապված ակնկալվող արդյունքների մասով առաջացել են լուրջ բացեր: Հայաստանի հանրային առողջապահության ֆինանսավորումն ամենացածրերից է տարածաշրջանում: Ծառայությունների հիմնական փաթեթում ընդգրկված ծառայությունների համար բարձր համավճարների, խոցելի սոցիալական խմբերին չպատկանող բնակչության համար անվճար ստացիոնար բուժօգնություն ստանալու և բոլոր ամբուլատոր պացիենտների համար անվճար դեղամիջոցներ ստանալու հնարավորությունների բացակայության հետևանքով երկրի առողջապահության ֆինանսավորման հիմնական աղբյուրն են դարձել տնային տնտեսությունների գրպանից կատարվող ծախսերը:

Բացի այդ, երկրի առջև ծառացած են նշանակալի ժողովրդագրական մարտահրավերներ, որոնք կազդեն առողջապահական ծախսերի կառուցվածքի վրա: Թեև, ըստ կանխատեսումների, մինչ 2030 թվականը բնակչության ընդհանուր թիվը փոքր-ինչ կնվազի, 65+ բնակչության մասնաբաժինն ընդհանուր բնակչության 10 տոկոսից կհասնի գրեթե մինչև 20%-ի: Ժողովրդագրական այս փոփոխությունից և դրա հետ կապված այլ գործոններից հետևում է, որ Հայաստանը պետք է ավելացնի հանրային առողջապահության ֆինանսավորումը՝ բնակչության անձնական ծախսերից առողջապահության համակարգի կախվածությունը նվազեցնելու համար, ինչպես նաև մեծացնի հանրային առողջապահությանը հատկացվող ֆինանսավորումը, որպեսզի կարողանա պահպանել և բարելավել հանրային առողջապահության ցուցանիշները և հասնել Համընդհանուր առողջապահական ծածկույթի համակարգի ներդրմանը: 2018 թվականին Հայաստանի բնակչության մոտ 400.000 մարդ եղել է աղքատ կամ գրեթե աղքատ: Ընդ որում՝ այդ մարդկանցից առնվազն 233.000-ը խոցելի խմբերի (ներառյալ՝ հաշմանդամներ, երեխաներ և տարեցներ) մաս են կազմել:

Ցածր և միջինից ցածր եկամուտ ունեցող շատ երկրների նման Հայաստանը բախվում է ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) ռեկորդային աճի մարտահրավերին: Հայաստանում, ինչպես և եվրոպական երկրների մեծ մասում, առավել տարածված հիվանդություններն են ՈՎՀ-ները, այն է՝ մի խումբ հիվանդություններ, որոնք ներառում են՝ սրտանոթային հիվանդությունները, քաղցկեղը, հոգեկան առողջության հետ կապված խնդիրները, շաքարային դիաբետը, շնչառական քրոնիկ հիվանդությունները և հենաշարժական համակարգի հիվանդություններ: Առողջապահության ազգային ինստիտուտի (ԱԱԻ) Վիճակագրական տարեգրքի տվյալների համաձայն՝ բոլոր մահերի մոտ 50 տոկոսի պատճառը սրտանոթային հիվանդություններն են, իսկ 74 տոկոսի պատճառը՝ ուղեղի անոթային հիվանդությունների, նորագոյացությունների և շաքարային դիաբետի համակցությունն է:

Հայաստանում ՈՎՀ-ների տարածվածության հիմնական վարքագծային որոշիչ գործոններն են մեծ քանակությամբ ծխախոտի և ալկոհոլի օգտագործումը, սնվելու սովորությունները և բնակչության ֆիզիկական ակտիվության ցածր մակարդակը:

2016 թվականին Հայաստանում ճանապարհատրանսպորտային պատահարներից մահացության միջին գործակիցը (100.000-ի հաշվով) կազմել է 17,1: Հարևան երկրներում՝ Վրաստանում, այդ գործակիցը կազմել է՝ 15,3, Իրանում՝ 20,5, իսկ Ռուսաստանում՝ 18,0: Ի գիտություն, եվրոպական երկրների մեծ մասում այդ գործակիցը գտնվում է 3-9 միջակայքում, ընդ որում՝ ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է նախկին արևելյան բլոկի երկրներում (Լեհաստան, Լատվիա, Հունգարիա): Հայաստանում ճանապարհատրանսպորտային պատահարների կանխման խոչընդոտներից են՝ անվտանգության գոտիներից օգտվելու ցածր մակարդակը, հին տրանսպորտային միջոցները, ճանապարհների վատ վիճակը և իրենց արդյունավետությունն ապացուցած ճարտարագիտական միջոցառումների մեջ ներդրումներ չկատարելը:

Առկա իրավիճակի հիմքում ընկած պատճառը, հավանաբար, պայմանավորված է սոցիալ-տնտեսական և փոփոխվող ռիսկի գործոններով, առողջ ապրելակերպի գործելակերպով և որոշ չափով գենետիկայով: Այս հարցում իրենց դերակատարումն ունեն նաև սրընթաց քաղաքայնացումը (ուրբանիզացիա), գերսնուցումը և թերսնուցումը, ինչպես նաև՝ ազդեցիկ քաղաքականության, օրինակ՝ ծխախոտի օգտագործումը վերահսկելու և աղի/շաքարի օգտագործումը նվազեցնելու ուղղությամբ ազդեցիկ քաղաքականություն վարելու ջանքերի բացակայությունը: Այս բոլոր գործոններին գումարվում են առաջնային բուժօգնության թերի համակարգերը և առողջապահական ծառայություններից օգտվելու ցածր մակարդակը: Նմանապես, բազմագործոն է նաև ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով ոչ դիտավորյալ հասցված վնասվածքների տարածվածության աճը, ընդ որում՝ այդ պատահարներից տուժողները, ընդհանուր առմամբ, երիտասարդներ են: Հայաստանում սրտանոթային հիվանդությունների ռիսկային գործոնների և ոչ դիտավորյալ վնասվածքների մեծ տարածվածության պայմաններում հրամայական է դառնում սրտամկանի ինֆարկտի, ինսուլտի և ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերում շտապ օգնության ծառայությունների բարելավումը:

Հայաստանում 63 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդիկ կազմում են բնակչության 12,5 տոկոսը: Նրանցից շատերն ունեն տարբեր տեսակի բուժօգնության կարիք, բայց չեն ստանում այն: Տարածքային սոցիալական մարմինների կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների կիզակետում հիմնականում խոցելի տնային տնտեսություններն են: Նպաստների մեծ մասն ուղղված է ընտանիքներին: Կարիքների գնահատման արդյունքների և նշանակված անապահովության միավորի հիման վրա խոցելի տարեց մարդիկ կարող են օգտվել տնային պայմաններում տրամադրվող բուժօգնությունից, իրենց բնակավայրերում հասանելի բուժօգնությունից, ցերեկային խնամքի ծառայություններից կամ մարդասիրական օգնության ծրագրերից, պոլիկլինիկաներում և հիվանդանոցներում տրամադրվող անվճար բուժօգնությունից: Պետպատվերի շրջանակներում անվճար բուժօգնության իրավունք ստանալու համար անձը պետք է բուժօգնում անցնի պոլիկլինիկայում և վճարի բուժօգնման արժեքի մի մասը: Մինչդեռ որոշ տարեցների համար ֆիզիկապես դժվար է գնալ պոլիկլինիկա՝ բուժօգնում անցնելու համար: Ոչ բոլոր տարեցները գիտեն իրենց իրավունքները: Շատ դեպքերում նրանք չգիտեն՝ ում դիմեն բուժօգնություն ստանալու համար կամ ինչ տեսակի նպաստների համար կարող են դիմել: Որպես խոցելի խումբ՝ տարեց մարդիկ հեշտությամբ կարող են դառնալ խարդախության կամ իրավունքների ոտնահարման զոհ:

2019 թվականին Հայաստանում տարեցների և սահմանափակ կարողություններով և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ մատուցող 12 հաստատություններում՝ տարեցների տներում, խնամքի կենտրոններում, տուն-ինտերնատում, բնակվում էր շուրջ 1390 մարդ (այդ թվում՝ 180-ը՝ չորս պետական հաստատություններում): Ավելի քան 3800 մարդ ստացել է խնամք տնային պայմաններում, իսկ մոտ 2000 մարդ հաճախել է ցերեկային խնամքի կենտրոններ:

Վերջին տարիներին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սոցիալական ծառայությունները պատվիրակել է հավաստագրված ՀԿ-ներին դրամաշնորհների տեսքով՝ տնային պայմաններում խնամքի, սոցիալական կենտրոններում ցերեկային խնամքի և տարեցների տներում խնամքի ծառայություններ կազմակերպելու համար: Նման դրամաշնորհների թիվը կրկնապատկվել է՝ 2019 թվականին առկա հինգ դրամաշնորհից 2020 թվականին հասնելով տասը դրամաշնորհի: Խնամքի ծառայություններ մատուցող հիմնական ՀԿ-ների շարքում ներառված ՀԿԽԸ-ն 2016 թվականից ի վեր մատուցել է տնային խնամքի, մարդասիրական օգնության, սննդի տրամադրման ամբողջական

փաթեթի ծառայություններ և աջակցել է տարեցների համար սոցիալական և ժամանցային միջոցառումների կազմակերպմանը: ՀԿԽԸ-ն խթանում է Ակտիվ, առողջ ծերացման հայեցակարգը:

Պաշտոնական վիճակագրության տվյալներից պարզ է դառնում, որ Հայաստանում ՄԻԱՎ-ի համաճարակը (2020 թվականին 6,73% կազմող ՄԻԱՎ-ի տարածվածությամբ), ինչպես նախկին Խորհրդային Միության այլ երկրներում, հիմնականում պայմանավորված է թմրամիջոցների ներարկային օգտագործմամբ (բոլոր գրանցված դեպքերի 54,5%): Վերջին տարիներին նկատվել է թմրամիջոցների ներարկային օգտագործման հետևանքով վարակման դեպքերի զգալի աճ: Ներկայիս դրությամբ Հայաստանում թմրամիջոցների ներարկային օգտագործման հետևանքով բոլոր վարակվածները տղամարդիկ են, ում մեծամասնությունը ժամանակավորապես բնակվել է Ռուսաստանում և Ուկրաինայում: Ուսումնասիրությունները փաստում են, որ թմրամիջոցների ներարկային օգտագործմամբ պայմանավորված ՄԻԱՎ-ի համաճարակի դեպքում խիստ կարևոր է վաղ միջամտությունը: ՄԱԶԻԱՀ-ի (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՉԻԱՀ ծրագրի գրասենյակ Հայաստանում) տվյալների բազայի համաձայն՝ 2020 թվականին Հայաստանում ներարկային եղանակով թմրամիջոցներ օգտագործող անձանց միջին թիվը կազմել է 9000, իսկ նրանց շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը՝ 1,9 տոկոս, ՄԻԱՎ-ի հայտնաբերման համար ստուգում անցած և իրենց կարգավիճակն իմացող անձանց թիվը կազմել է 58,3 տոկոս, իսկ սեռական հարաբերությունների ժամանակ պահպանակից օգտվում է նրանցից 41,4 տոկոսը: Ներարկային եղանակով թմրամիջոցներ օգտագործող այդ անձանց շրջանում «C» հեպատիտի և ՄԻԱՎ-ով համակցված վարակի ցուցանիշը կազմել է 66,7 տոկոս:

Հայաստանին ծանր հարված է հասցրել նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակը, և 2020 թվականին երկրի տնտեսական առաջընթացը խափանվել է: Երկիրը տուժել է կորոնավիրուսի ծանր բռնկումից, հատկապես 2021 թվականի առաջին եռամսյակում նոր ալիքից՝ զբաղեցնելով 33-րդ տեղը աշխարհի երկրներում մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի շարքում:

Կորոնավիրուսի համավարակի հետևանքով վատթարացել է խոցելի մարդկանց և համայնքների տնտեսական, սոցիալական և հոգեբանական վիճակը: Բազում խոցելի համայնքներ և առանձին բնակիչներ ապրում էին իրենց օրական վաստակով, տնային տնտեսություններից, գյուղատնտեսական աշխատանքից, փոքր ձեռներեցությունից, ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներով և սահմանափակումների պատճառով հայտնվել են սոցիալապես և տնտեսապես խոցելի վիճակում: Հիմնական առաջնահերթությունների շարքում հարկավոր է հաշվի առնել նաև հոգեբանասոցիալական կողմը, քանի որ բարդ իրադրության, ծանր պայմանների, ռիսկի, վախի և համաճարակի հետ կապված մտավախությունների և անորոշության հետևանքով խոցելի բնակչությունը դարձել է սոցիալապես և հոգեբանորեն էլ ավելի զգայուն:

Բժշկական հաստատություններից շատերը փոխեցին իրենց ուղղվածությունը և սկսեցին բուժել կորոնավիրուսով վարակված պացիենտներին: Առողջապահության ոլորտի հազարավոր մասնագետներ վերապատրաստում անցան նոր կորոնավիրուսային հիվանդության բուժման մասով և սկսեցին բուժօգնություն ցուցաբերել այդ պացիենտներին: Քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդիկ բախվեցին տեղաշարժի սահմանափակումների և բժշկական ստուգում անցնելու համար պոլիկլինիկա հասնելու հետ կապված դժվարությունների: Բնակչությունն, ընդհանուր առմամբ, կրել է հոգեբանական և տնտեսական ազդեցություն, մասնավորապես՝ ծանր սոցիալ-տնտեսական վիճակում գտնվող բնակչության խմբերը:

Դժվարություններ են եղել /ղեռնա կան նաև կրթության ոլորտում, հատկապես՝ դպրոցականների/ուսանողների և ուսուցիչների համար, քանի որ նրանցից շատերը չունենին/չունեն համակարգիչներ, էլեկտրոնային սարքեր, բարձրորակ ինտերնետ, բավականաչափ համակարգչային գիտելիք և այլն՝ հեռավար կրթության համակարգին միանալու համար: Մա հոգեբանական ազդեցություն է գործում երեխաների, նրանց ընտանիքների և ուսուցիչների վրա, ովքեր նույնպես ստիպված են եղել/ստիպված են ընտելանալ հեռավար կրթության նոր իրողությանը:

2-ԲԴ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

«Հայաստանում մարդիկ ապրում են ապահով, առողջ և արժանապատիվ կյանքով և ունեն բարգավաճման հնարավորություններ»:

ՀԿԽԸ-ն գիտակցում է, որ կայուն զարգացման հասնելու համար՝ այն պետք է աշխատանք տանի շատ ավելի համակարգված ձևերով, որպեսզի կարողանա խթանել սոցիալական ներառման հնարավորությունները, բարձրացնել մարդկանց դիմակայունության մակարդակը և բարգավաճելու նրանց կարողությունը: Այս մոտեցման շրջանակներում կենսական նշանակություն ունի մարդկանց համար բարձրակարգ բուժօգնության հասանելիության ապահովումը և առողջապահական համակարգի դիմակայունությունը խոցելի դարձնող ռիսկերի մեղմացումը: ՀԿԽԸ-ն կօգտվի իր փորձից, որպեսզի խրախուսի բարեկեցությունը բոլոր մակարդակներում, ներառյալ՝ բարենպաստ սոցիալական պայմանները, մտավոր և ֆիզիկական առողջությունը և կենսապայմանները:

1-ԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ. ՀԿԽԸ-Ի ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ռազմավարական նպատակի իրագործմանը նպաստելու համար՝ ՀԿԽԸ-ն աշխատանք կտանի նաև հետևյալ ուղղությամբ.

1. Հայաստանի առողջապահական և սոցիալական ծառայությունների բարելավում ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1.1 ՀԿԽԸ-ի թիրախային մարզերի տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար ավելի հասանելի են դարձել պատշաճ խնամքի և բուժօգնության ծառայությունները:

Միջամտության ուղղություններ

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր ընտրված մարզերում՝ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց որակյալ տնային խնամքի ծառայություններ մատուցելու համար:

Բացի այդ, ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների հետագա ինստիտուցիոնալացման ուղղությամբ:

Ցուցանիշ

1.1.1 Թիրախային մարզերում պատշաճ խնամքի ծառայություններին հասանելիություն ունեցող տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց թիվն (ըստ սեռի և տարիքի բաշխված) ավելացել է 15 տոկոսով:

1.2 Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց համայնքի և հասարակական կյանքին մասնակցության մակարդակի բարձրացում

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի բոլոր մակարդակներով ակտիվ ծերացման հայեցակարգը խթանող ծրագիր:

Ցուցանիշ

1.2.1 Թիրախային մարզերում համայնքային կյանքին, իրենց իսկ խոսքով, ակտիվ մասնակցություն ունեցող տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց թիվը (ըստ սեռի և տարիքի բաշխված) ավելացել է 20 տոկոսով:

1.3 ՌՎՀ-ներ ունեցող մարդկանց՝ հիվանդության կառավարման վերաբերյալ գիտելիքի խորացում և իրազեկվածության մակարդակի բարձրացում

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր, որի կիզակետում է ոչ վարակիչ հիվանդություններ ունեցող թիրախային բնակչությանը որակյալ սոցիալական և առողջապահական ծառայություններ մատուցելու իր կարողությունների բարելավումը:

Ցուցանիշներ

1.3.1 Թիրախային մարզերում առողջապահական և սոցիալական ծառայություններին հասանելիություն ունեցող ՌՎՀ-ներ ունեցող մարդկանց թիվն ավելացել է 10 տոկոսով:

1.3.2 Հիվանդության կառավարման վերաբերյալ ավելի իրազեկ դարձած ՌՎՀ-ներ ունեցող մարդկանց թիվը թիրախային մարզերում ավելացել է 10 տոկոսով:

1.4 Հոգեկան առողջության պահպանման և սոցիալ հոգեբանական աջակցության ծառայություններն ավելի ինստիտուցիոնալացված են և ավելի հասանելի են թիրախային մարդկանց համար:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր՝ բնակչության թիրախային խոցելի խմբերին ավելի որակյալ և մատչելի հոգեկան առողջության պահպանման և սոցիալ հոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրելու համար:

Ցուցանիշներ

1.4.1 ՀԿԽԸ-ի հոգեկան առողջության պահպանման և սոցիալ հոգեբանական աջակցության ծառայությունները լիովին ինստիտուցիոնալացված են և մատուցվում են:

1.4.2 ՀԿԽԸ-ի կողմից տրամադրվող հոգեկան առողջության պահպանման և սոցիալ հոգեբանական աջակցության ծառայություններից օգտվող մարդկանց թիվն ավելացել է 15 տոկոսով:

1.5 ՀԿԽԸ-ի թիրախային համայնքներն ավելի իրազեկ են համաճարակին, համավարակին պատրաստվածության և դրանց արձագանքման վերաբերյալ:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր, որի նպատակն է ամրապնդել թիրախային տեղական համայնքների դիմակայունությունն առողջապահական արտակարգ իրավիճակների դեպքում:

Ցուցանիշ

1.5.1 ՀԿԽԸ-ի կողմից կազմակերպված դասընթացներին, իրազեկվածության մակարդակի բարձրացման արշավներին, տեղեկատվական միջոցառումներին, աշխատաժողովներին և այլ միջոցառումներին համայնքային մակարդակով մասնակցած մարդկանց թիվն ավելացել է 15 տոկոսով:

ԱՎՆԿԱԼ ՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱՂԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀԱՃԱՌԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԳՐԱՎՎ ԱԾ ԱՆՁԻՆՔ/ՊԱՏԱՄԽԱՆ ԱՏՈՒՆԵՐ
<p>1.1.1 Թիրախային մարզերում պատշաճ խնամքի ծառայություններին հասանելիություն ունեցող տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց թիվն (ըստ սեռի և տարիքի բաշխված) ավելացել է 15 տոկոսով:</p> <p>1.2.1 Թիրախային մարզերում համայնքային կյանքին, իրենց իսկ խոսքով, ակտիվ մասնակցություն ունեցող տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց թիվը (ըստ սեռի և տարիքի բաշխված) ավելացել է 20 տոկոսով:</p> <p>1.3.1 Առողջապահական և սոցիալական ծառայություններին հասանելիություն ունեցող ՈՎՀ-ներ ունեցող մարդկանց թիվն ավելացել է 10 տոկոսով:</p> <p>1.3.2 Հիվանդության կառավարման վերաբերյալ ավելի իրազեկ դարձած ՈՎՀ-ներ ունեցող մարդկանց թիվը թիրախային մարզերում ավելացել է 10 տոկոսով:</p> <p>1.4.1 Հոգեկան առողջության պահպանման և հոգեբանասոցիալական աջակցության</p>	<p>1.1.1 Փաստաթղթերի փաթեթներ և գոհունակության հարցումներ.</p> <p>1.2.1 Փաստաթղթերի փաթեթներ, առկա զեկույցներ և հարցումներ.</p> <p>1.3.1 և 1.3.2 Փաստաթղթերի փաթեթներ, առկա զեկույցներ և հարցումներ.</p> <p>1.4.1 Ստանդարտ գործառնական ընթացակարգեր, ռազմավարական փաստաթղթեր, այլ</p>	<p>ՀԿԽԸ-ի և այլ շահագրգիռ կողմերի զեկույցների տարեկան վերանայում և հարցումների անցկացում</p>	<p>Առողջապահական բաժնի/Առաջին օգնության բաժնի/ Հոգեկան առողջության պահպանման և հոգեբանասոցիալական աջակցության բաժնի համակարգողներ</p>

<p>ծառայությունները լիովին ինստիտուցիոնալացված են և մատուցվում են:</p> <p>1.4.2 Հոգեկան առողջության պահպանման և սոցիալիզացիայի աջակցության ծառայություններից օգտվող մարդկանց թիվն ավելացել է 15 տոկոսով:</p> <p>1.5.1 Դասընթացներին, իրազեկվածության մակարդակի բարձրացման արշավներին, տեղեկատվական միջոցառումներին, աշխատաժողովներին և այլ միջոցառումներին համայնքային մակարդակով մասնակցած մարդկանց թիվն ավելացել է 15 տոկոսով:</p>	<p>հարակից փաստաթղթեր.</p> <p>1.4.2 Հեռախոսային թեժ գծի տվյալների բազա և դրան առնչվող փաստաթղթերը.</p> <p>1.5.1 Դասընթացների մասնակիցների ցուցակներ, տեղեկատվական միջոցառումների գրանցամատյաններ և բաշխման ցուցակներ</p>		
--	--	--	--

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ

Հայաստանի Առողջապահության և սոցիալական բարեկեցության ոլորտում գործում են համապատասխան շահագրգիռ կողմեր, ովքեր ունեն նմանօրինակ հետաքրքրություններ, իրականացնում են նմանօրինակ գործունեություն և անգամ ունեն նույն հնարավոր թիրախային խմբերը, ինչ ՀԿԽԸ-ն: Ազգային ընկերությունը պետք է ջանքեր գործադրի այդ շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրի հետ իր հաստատված փոխհարաբերությունները և համագործակցությունը պահպանելու և (կամ) նրանց հետ փոխհարաբերություններ և համագործակցություն հաստատելու ուղղությամբ՝ նրանց և իր կողմից նույն աշխատանքի կատարումը կամ աշխատանքի կրկնությունը բացառելու և ակնկալվող արդյունքների ու նախանշված փոփոխության արդյունավետ իրականացմանը նպաստելու ուղղությամբ համատեղ ջանքերն առավելագույնի հասցնելու համար: Այս նպատակի մասով բացահայտված հիմնական շահագրգիռ կողմերն են՝ պետական մարմինների շրջանում՝ Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Առողջապահության նախարարությունը և մարզային իշխանությունները, ինչպես նաև՝ ՄԱԿ-ի գործակալությունները՝ ՄԱԲՀ, ԱՀԿ, ՄԱԿ ԵՏՀ (Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով), ՄԱԶԻԱՀ (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ԶԻԱՀ ծրագրի գրասենյակ Հայաստանում), ՄՀՀ (CCM), Միջազգային շարժման գործընկերները, Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնը և այլ ՀԿ-ները և թիրախային խմբերը:

ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Առկա են մի քանի գործոններ, որոնք կարող են հնարավորություն տալ ՀԿԽԸ-ին ստանալ վերոնշյալ ակնկալվող արդյունքները և նպաստել իր ռազմավարական խնդրի և նպատակի իրագործմանը. Ազգային ընկերությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի նպաստի այդ գործոնների առաջացմանը, ինչը հնարավորություն կտա հասնել ռազմավարական փոփոխության: Այս առումով կարևոր նախապայմաններն են.

1. Նախատեսված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութական և կադրային ռեսուրսների առկայությունը.
2. ՀԿԽԸ-ի ամուր և կայուն համագործակցությունը ներքին և արտաքին գործընկերների հետ.

3. Կուտակված փորձը և շահագրգիռ կողմերի շրջանում ՀԿԽԸ-ի ունեցած բարձր հեղինակությունը.
4. Միջազգային շարժման՝ Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի առկայություն:

Միևնույն ժամանակ, ՀԿԽԸ-ն պետք է լինի իրազեկ և ձեռնարկի կանխարգելիչ միջոցներ՝ ակնկալվող արդյունքներին հասնելու գործընթացը բարդացնող կամ անհնարին դարձնող վերհանված ռիսկերի և խոչընդոտների առաջացման հավանականությունը նվազեցնելու համար.

1. Երկրի աշխարհաքաղաքական իրավիճակի անկայունությունը և հնարավոր վատթարացումը.
2. Ծրագրերի իրականացման ընթացքում առաջանում են նոր արտակարգ իրավիճակներ, որոնք դժվարացնում են ծրագրերի իրականացման շարունակությունը կամ ստիպում են այլ հարցերի վրա կենտրոնացնել ուշադրությունը:

2-ՐԴ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

2. Բարձրացել է ՀԿԽԸ-ի թիրախային մարդկանց՝ առողջապահական խնդիրների վերաբերյալ գիտելիքի և իրազեկվածության մակարդակը:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐ

2.1 Ընդհանուր առմամբ, բնակչությունը նոր գիտելիք է ձեռքբերել Առաջին օգնության (ԱՕ) և շոգեբանական առաջին օգնության (ՇԱՕ) ոլորտում:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի խորացված և հարմարեցված վերապատրաստման ծրագիր Առաջին օգնության և հոգեբանական առաջին օգնության վերաբերյալ թիրախավորելով բնակչության բոլոր հատվածները:

Ցուցանիշ

2.1.1 ԱՕ-ի և ՇԱՕ-ի վերաբերյալ ՀԿԽԸ-ի վերապատրաստման դասընթացին մասնակցած մարդկանց թիվն ավելացել է 30 տոկոսով:

2.2 ՀԿԽԸ-ի թիրախային համայնքներն ավելի տեղեկացված են տուբերկուլյոզի և այլ վարակիչ հիվանդությունների մասին:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր՝ տեղեկատվության տարածման տարբեր բաղադրիչ ծրագրերի և գործողությունների միջոցով, որոնք ուղղված կլինեն տուբերկուլյոզ և այլ վարակիչ հիվանդություններ ունեցող մարդկանց խարանավորման և նրանց նկատմամբ խտրականության նվազեցմանը:

Ցուցանիշ

2.2.1 Տուբերկուլյոզի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ ՀԿԽԸ-ի իրազեկվածության բարձրացման միջոցառումներում թիրախային համայնքներից ընդգրկված մարդկանց թիվն ավելացել է 20 տոկոսով:

2.3 ՀԿԽԸ-ի խնամք տրամադրող աշխատողները և կամավորները նոր գիտելիք են ձեռքբերել և բարելավել են իրենց հմտությունները՝ ավելի որակյալ խնամքի ծառայություններ մատուցելու համար:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի Խնամքի տրամադրման ուժեղացված վերապատրաստման դասընթաց՝ թիրախային մարզերում աշխատող իր խնամք տրամադրող աշխատողների և կամավորների գիտելիքները և հմտությունները բարելավելու համար:

Ցուցանիշ

2.3.1 Խնամք տրամադրողների համար նախատեսված վերապատրաստում անցած թիրախային մարզերում ՀԿԽԸ-ի աշխատողների և կամավորների թիվն ավելացել է 60 տոկոսով:

2.4 ՀԿԽԸ-ի թիրախային համայնքների բնակչությունը բարելավել է հանրային առողջապահության և առողջ ապրելակերպի վերաբերյալ իր գիտելիքները:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր թիրախային համայնքներում տեղեկատվության տարածման տարբեր բաղադրիչ ծրագրերի և գործողությունների միջոցով՝ բնակչության շրջանում առողջ ապրելակերպի սովորությունները խթանելու նպատակով:

Ցուցանիշ

2.4.1 Համայնքների առողջության և առողջ ապրելակերպի վերաբերյալ ՀԿԽԸ-ի վերապատրաստման դասընթացն անցած թիրախային համայնքներից մարդկանց թիվն ավելացել է 25 տոկոսով:

2.5 ՀԿԽԸ-ն և գործընկեր ԱԸ-ները ավելի լավ են տեղեկացված համայնքի բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացման մասով կուտակված լավագույն փորձի մասին:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի Փորձի փոխանակման ծրագիր, որը կխթանի ազգային ընկերությունների և Միջազգային շարժման այլ գործընկերների միջև համայնքի իրազեկվածության մակարդակի բարձրացման մասով ձեռքբերված փորձի փոխանակումը:

Ցուցանիշ

2.5.1 ՀԿԽԸ-ի, գործընկեր ԱԸ-ների և Շարժման այլ գործընկերների մասնակցությամբ համայնքի իրազեկվածության մակարդակի բարձրացման մասով փորձի փոխանակման միջոցառումների թիվն ավելացել է 30 տոկոսով:

ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀԱՃԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻՆՔ/ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ
<p>2.1.1 ԱՕ-ի և ՀԱՕ-ի վերաբերյալ ՀԿԽԸ-ի վերապատրաստման դասընթացին մասնակցած մարդկանց թիվն ավելացել է 30 տոկոսով:</p> <p>2.2.1 Տուրերկույոզի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ ՀԿԽԸ-ի իրազեկվածության բարձրացման միջոցառումներում թիրախային համայնքներից ընդգրկված մարդկանց թիվն ավելացել է 20 տոկոսով:</p> <p>2.3.1 Խնամք տրամադրողների համար նախատեսված թիրախային մարզերում վերապատրաստում անցած ՀԿԽԸ-ի աշխատողների և կամավորների թիվն ավելացել է 60 տոկոսով:</p> <p>2.4.1. Հանրային առողջապահության և առողջ ապրելակերպի վերաբերյալ ՀԿԽԸ-ի վերապատրաստման դասընթացն անցած թիրախային համայնքներից մարդկանց թիվն ավելացել է 25 տոկոսով:</p> <p>2.5.1 ՀԿԽԸ-ի, գործընկեր ԱԸ-ների և Շարժման այլ գործընկերների մասնակցությամբ համայնքի իրազեկվածության մակարդակի բարձրացման մասով փորձի փոխանակման միջոցառումների թիվն ավելացել է 30 տոկոսով:</p>	<p>2.1.1 Առկա փաստաթղթեր և զեկույցներ.</p> <p>2.2.1 Առկա լուսանկարներ, փաստաթղթեր և զեկույցներ միջոցառումների վերաբերյալ.</p> <p>2.3.1 գիտելիքների բարելավման մասով գնահատումներ, դասընթացի ավարտական քննության արդյունքներ.</p> <p>2.4.1 գիտելիքների բարելավման մասով գնահատումներ, դասընթացի ավարտական քննության արդյունքներ.</p> <p>2.5.1 Տեղում կազմված զեկույցներ</p>	<p>ՀԿԽԸ-ի և այլ շահագրգիռ կողմերի զեկույցների տարեկան վերանայում. տարեկան հարցման իրականացում</p>	<p>Առողջապահական բաժնի/Առաջին օգնության բաժնի/ Հնոզեկան առողջության պահպանման և սոցիալիզմի անվան աջակցության բաժնի համակարգողներ</p>

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ

Հայաստանի Առողջապահության ոլորտում գործում են համապատասխան շահագրգիռ կողմեր, ովքեր ունեն նմանօրինակ հետաքրքրություններ, իրականացնում են նմանօրինակ գործունեություն և անգամ ունեն նույն հնարավոր թիրախային խմբերը, ինչ ՀԿԽԸ-ն: Ազգային ընկերությունը պետք է ջանքեր գործադրի այդ շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրի հետ իր հաստատված փոխհարաբերությունները և համագործակցությունը պահպանելու և (կամ) նրանց հետ փոխհարաբերություններ և համագործակցություն հաստատելու ուղղությամբ նրանց և իր կողմից նույն աշխատանքի կատարումը կամ աշխատանքի կրկնությունը բացառելու և ակնկալվող արդյունքների ու նախանշված փոփոխության արդյունավետ իրականացմանը նպաստելու ուղղությամբ համատեղ ջանքերն առավելագույնի հասցնելու համար: Այս նպատակի մասով բացահայտված հիմնական շահագրգիռ կողմերն են՝ պետական մարմինների շրջանում՝ Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Առողջապահության նախարարությունը և

մարզային իշխանությունները, ինչպես նաև՝ ՄԱԿ-ի գործակալությունները՝ ՄԱԲՀ, ԱՀԿ, ՄԱԿ ԵՏՀ (Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով), ՄԱԶԻԱՀ (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ԶԻԱՀ ծրագրի գրասենյակ Հայաստանում), ՄՀՀ (CCM), ԱՄՆ ՄԶԳ (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն) և Միջազգային շարժման գործընկերները:

ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽՈՂԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Առկա են մի քանի գործոններ, որոնք կարող են հնարավորություն տալ ՀԿԽԸ-ին ստանալ վերոնշյալ ակնկալվող արդյունքները և նպաստել իր ռազմավարական խնդրի և նպատակի իրագործմանը. Ազգային ընկերությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի նպաստի այդ գործոնների առաջացմանը, ինչը հնարավորություն կտա հասնել ռազմավարական փոփոխության: Այս առումով կարևոր նախապայմաններն են.

1. Նախատեսված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութական և կադրային ռեսուրսների առկայությունը.
2. ՀԿԽԸ-ի ամուր և կայուն համագործակցությունը ներքին և արտաքին գործընկերների հետ.
3. Կուտակված փորձը և շահագրգիռ կողմերի շրջանում ՀԿԽԸ-ի ունեցած բարձր հեղինակությունը.
4. Միջազգային շարժման՝ Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի առկայություն:

Միևնույն ժամանակ, ՀԿԽԸ-ն պետք է լինի իրազեկ և ձեռնարկի կանխարգելիչ միջոցներ՝ ակնկալվող արդյունքներին հասնելու գործընթացը բարդացնող կամ անհնարին դարձնող վերհանված ռիսկերի և խոչընդոտների առաջացման հավանականությունը նվազեցնելու համար.

1. Երկրի աշխարհաքաղաքական իրավիճակի անկայունությունը և հնարավոր վատթարացումը.
2. Ծրագրերի իրականացման ընթացքում առաջանում են նոր արտակարգ իրավիճակներ, որոնք դժվարացնում են ծրագրերի իրականացման շարունակությունը կամ ստիպում են այլ հարցերի վրա կենտրոնացնել ուշադրությունը:

3-ՐԴ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ. ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

3. Հայաստանի առողջապահության և սոցիալական ծառայությունների ենթակառուցվածքների և կառավարման բարելավում

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

3.1 Հայաստանի օրենսդրության և սոցիալական ու առողջապահական ոլորտների քաղաքականությունների բարելավում

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն իրականացնում է Շահապաշտպանության (ադվոկացիա) ծրագիր, որի նպատակն է մշակել քաղաքականություններ և առաջարկություններ՝ Հայաստանում Առողջապահության և սոցիալական խնամքի ծառայությունների նվազագույն չափանիշների բարելավումը խթանելու համար:

Ցուցանիշ

3.1.1 ՀԿԽԸ-ն փոխանցել է Կառավարությանը (Առողջապահության նախարարություն/Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն) առողջապահության և սոցիալական ոլորտների գործող օրենսդրության և քաղաքականությունների բարելավմանն ուղղված Քաղաքականություն մշակելու վերաբերյալ իր առաջարկությունները:

3.2 Հայաստանի առողջապահական կրթության չափանիշների բարելավում

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն իրականացնում է Շահապաշտպանության (աղվոկացիա) ծրագիր, որի նպատակն է մշակել քաղաքականություններ և առաջարկություններ՝ Հայաստանում առողջապահական կրթության չափանիշների վերանայումը և բարելավումը խթանելու համար:

Ցուցանիշ

3.2.1 ՀԿԽԸ-ն փոխանցել է Կառավարությանը (Կրթության նախարարություն) գործող առողջապահական կրթության չափանիշների բարելավմանն ուղղված իր Առաջարկությունները:

ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ ԵՎ ՀԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻՆՔ/ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ
<p>3.1.1 ՀԿԽԸ-ն փոխանցել է Կառավարությանը (Առողջապահության նախարարություն) առողջապահության և սոցիալական ոլորտների գործող օրենսդրության և քաղաքականությունների բարելավմանն ուղղված Քաղաքականություն մշակելու վերաբերյալ իր առաջարկությունները:</p> <p>3.2.1 ՀԿԽԸ-ն փոխանցել է Կառավարությանը (Կրթության նախարարություն) գործող առողջապահական կրթության չափանիշների բարելավմանն ուղղված իր Առաջարկությունները:</p>	<p>3.1.1 և 3.2.1 Քաղաքականության և վերաբերյալ առաջարկությունների փաստաթղթեր</p>	<p>ՀԿԽԸ-ի և այլ շահագրգիռ կողմերի զեկույցների տարեկան վերանայում և քաղաքականությունների ու չափանիշների վերաբերյալ առաջարկությունների մշակում</p>	<p>Առողջապահական բաժնի/Առաջին օգնության բաժնի/ Հոգեկան առողջության պահպանման և սոցիալիզմի բանակային աջակցության բաժնի համակարգողներ</p>

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՈՒ ԿՈՂՄԵՐԸ

Հայաստանի Առողջապահության ոլորտում գործում են համապատասխան շահագրգիռ կողմեր, ովքեր ունեն նմանօրինակ հետաքրքրություններ, իրականացնում են նմանօրինակ գործունեություն և անգամ ունեն նույն հնարավոր թիրախային խմբերը, ինչ ՀԿԽԸ-ն: Ազգային ընկերությունը պետք է ջանքեր գործադրի այդ շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրի հետ իր հաստատված փոխհարաբերությունները

և համագործակցությունը պահպանելու և (կամ) նրանց հետ փոխհարաբերություններ և համագործակցություն հաստատելու ուղղությամբ նրանց և իր կողմից նույն աշխատանքի կատարումը կամ աշխատանքի կրկնությունը բացառելու և ակնկալվող արդյունքների ու նախանշված փոփոխության արդյունավետ իրականացմանը նպաստելու ուղղությամբ համատեղ ջանքերն առավելագույնի հասցնելու համար: Այս նպատակի մասով բացահայտված հիմնական շահագրգիռ կողմերն են՝ պետական մարմինների շրջանում՝ Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Առողջապահության նախարարությունը և մարզային իշխանությունները, ինչպես նաև՝ ՄԱԿ-ի գործակալությունները՝ ՄԱԲՀ, ԱՀԿ, ՄԱԿ ԵՏՀ (Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով), ՄԱԶԻԱՀ (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ԶԻԱՀ ծրագրի գրասենյակ Հայաստանում), ՄՀՀ (CCM), ԱՄՆ ՄԶԳ (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն), Միջազգային շարժման գործընկերները, Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնը և այլ ՀԿ-ները և թիրախային խմբերը:

ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Առկա են մի քանի գործոններ, որոնք կարող են հնարավորություն տալ ՀԿԽԸ-ին ստանալ վերոնշյալ ակնկալվող արդյունքները և նպաստել իր ռազմավարական խնդրի և նպատակի իրագործմանը. Ազգային ընկերությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի նպաստի այդ գործոնների առաջացմանը, ինչը հնարավորություն կտա հասնել ռազմավարական փոփոխության: Այս առումով կարևոր նախապայմաններն են.

1. Նախատեսված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութական և կադրային ռեսուրսների առկայությունը.
 2. ՀԿԽԸ-ի ամուր և կայուն համագործակցությունը ներքին և արտաքին գործընկերների հետ.
 3. Կուտակված փորձը և շահագրգիռ կողմերի շրջանում ՀԿԽԸ-ի ունեցած բարձր հեղինակությունը.
 4. Միջազգային շարժման՝ Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի առկայություն: Միևնույն ժամանակ, ՀԿԽԸ-ն պետք է լինի իրազեկ և ձեռնարկի կանխարգելիչ միջոցներ՝ ակնկալվող արդյունքներին հասնելու գործընթացը բարդացնող կամ անհնարին դարձնող վերհանված ռիսկերի և խոչընդոտների առաջացման հավանականությունը նվազեցնելու համար.
1. Երկրի աշխարհաքաղաքական իրավիճակի անկայունությունը և հնարավոր վատթարացումը.
 2. Ծրագրերի իրականացման ընթացքում առաջանում են նոր արտակարգ իրավիճակներ, որոնք դժվարացնում են ծրագրերի իրականացման շարունակությունը կամ ստիպում են այլ հարցերի վրա կենտրոնացնել ուշադրությունը:

3. ԵՐԿՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ . ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ

Բազում գնահատումների համաձայն՝ 20-րդ դարի արտագաղթի ալիքների հետևանքով առնվազն 5.000.000 հայ այսօր ապրում է արտերկրում, մեծամասամբ՝ նախկին Խորհրդային Միության երկրներում, իսկ ավելի քան 1.000.000 հայ՝ Միացյալ Նահանգներում:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Լեոնային Ղարաբաղի (ԼՂ) (բնակչության թիվը՝ 150.000) շուրջ հակամարտությունը սրվեց: 2020 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ԼՂ հիմնական քաղաքների հրետակոծությունների հետևանքով ԼՂ բնակիչները տեղահանվել են Լեոնային Ղարաբաղին սահմանակից հայկական քաղաքներ և ավելի մեծ քաղաքներ, ներառյալ՝ մայրաքաղաք Երևան:

Հակամարտության սրման ընթացքում և դրանից հետո մոտ 90.000 մարդ տեղահանվել է Երևան և Հայաստանի տասը մարզեր: Նրանց ճնշող մեծամասնությունը (մոտ 88%) կանայք և երեխաներ են, իսկ 22 տոկոսը՝ տարեցներ: Տարբեր զեկույցներում նշվում է, որ նոյեմբերի կեսերից սկսած՝ 20.000-50.000 անհատ վերադարձել է Լեռնային Ղարաբաղ, սակայն այդ վերադարձների բնույթը և կայունությունը դեռևս ճշտման կարիք ունի: Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղահանված անձանց մեծ մասը, հավանաբար, կնախընտրի առաջիկա ամիսներին մնալ Հայաստանում: Մի շարք գերատեսչությունների հաշվարկներով՝ Հայաստանում մնացած մարդկանց թիվը կազմում է 35.000-40.000: Տեղահանված բնակչության մեծամասնությունը կացարան է գտել Երևանում և շրջակա տարածքներում՝ հարազատների կամ հյուրընկալող ընտանիքների մոտ և ժամանակավոր հանրային կացարանի կենտրոններում, որոնք ներառում են՝ հյուրանոցներ, հանրակացարաններ, պանսիոնատներ, նախկին առողջարաններ, մանկապարտեզներ և վատ վիճակում գտնվող ջեռուցման ու ջրամատակարարման համակարգ և սանիտարահիգիենիկ պայմաններ ունեցող կամ առհասարակ նման համակարգ և պայմաններ չունեցող համայնքային շենքերում:

Քանի որ ակնկալվում է, որ տեղահանված բնակչության մի մասը Հայաստանում կմնա ավելի երկար ժամանակ, էլ ավելի կարևոր է դառնում հասկանալ փախստականի նման կարգավիճակում հայտնված բնակչության կացարանի հետ կապված մարդասիրական և վաղ վերականգնման կարիքները և նրանց մտադրությունները՝ փախստականի նման կարգավիճակում հայտնված տնային տնտեսությունների (SS) առաջ ծառայած ռիսկերի, խոչընդոտների, մարտահրավերների և ապագա հնարավորությունների մասին հստակ և հետևողական պատկերացում կազմելու, ինչպես նաև՝ տուժած բնակչությանն աջակցելու համար ավելի արդյունավետ միջոցառումներ մշակելու համար:

- **Կացարան և ոչ պարենային ապրանք (ՈՊԱ).** փախստականի նման կարգավիճակում հայտնված բնակչության ամենաառաջնահերթ կարիքը հանդիսանում է կացարանի տրամադրումը. առավել հաճախ հանդիպող խնդիրը տարածքի պակասն է և անձնական կյանքի անձեռնմխելիությունն ու արժանապատվությունը բարելավելու անհրաժեշտությունը: Ինչ վերաբերում է ՈՊԱ-ի պակասին, տնային տնտեսությունների 50 տոկոսը նշել է անկողնային պարագաների բացակայությունը:
- **Ջուր, սանիտարահիգիենիկ պայմաններ.** փախստականի նման կարգավիճակում հայտնված տնային տնտեսություններից շատերը հայտնել են, որ ունեն բավականաչափ խմելու ջուր, ինչպես նաև ջուր ճաշ պատրաստելու և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար: Առավել հաճախ նշվել է ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված հետևյալ պարագաների պակասը՝ լվացքի փոշի, օճառ և գուգարանի թուղթ, տան մաքրող հեղուկ և սպասքի լվացող միջոցներ:
- **Առողջություն.** 2020թ. դեկտեմբերից ի վեր տնային տնտեսությունների շրջանում արձանագրվել է շարունակական մասնագիտացված առողջապահական ծառայությունների կարիք: Ըստ հարցվածների՝ առողջապահական ծառայությունների հասանելիության մասով հիմնական խնդիրը ծառայությունների և (կամ) դեղորայքի բարձր արժեքն էր, ինչպես նաև՝ մոտակայքում մատուցվող հոգեկան առողջության պահպանման ծառայությունների մասին իրազեկվածության պակասը:
- **Կենսապահովման միջոցներ.** տնային տնտեսությունների զբաղվածությունը շարունակում է մնալ անկայուն, քանի որ նրանցից միայն 23 տոկոսն է նշել, որ ներկայիս կացավայր ժամանելուց ի վեր իրենց ընտանիքի անդամներից որևէ մեկը սկսել է իրականացնել եկամտաբեր գործունեություն:

- **Մենդի անվտանգություն.** տնային տնտեսությունների ավելի քան 90 տոկոսը որպես իրենց սենդի հիմնական աղբյուրներ նշել են խանութից գնված սնունդը: Բացի այդ, տնային տնտեսությունների մեծ մասը որպես սենդի աղբյուր նշել է նաև մարդասիրական օգնության շրջանակներում տրամադրված սնունդը: Գնահատման մեջ ընդգրկված տնային տնտեսությունների մեծ մասը նշել է, որ սննդամթերք գնելու իրենց հնարավորությունները նվազել են՝ մեկ տարի առաջվա համեմատ:
- **COVID-19.** Գնահատման մեջ ընդգրկված տնային տնտեսություններից շատերը հայտնել են, որ նրանց ընտանիքի բոլոր անդամները կամ մի մասը ձեռնարկել են անհրաժեշտ միջոցներ նոր կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելը կանխելու համար: Նրանց նշած ամենամեծ դժվարությունը կապված է եղել ընտանիքի համար դիմակներ և հիգիենայի միջոցներ ձեռք բերելու հետ: Բնակչության այդ խմբերի ավելի քան 90 տոկոսը նշել է, որ կորոնավիրուսի դեմ պատվաստվելու առաջարկ ստանալու դեպքում նրանք կա՛մ չեն ստանա այն, կա՛մ համոզված չեն այն ստանալու մասով:

3-ՐԴ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

«Մարդիկ ունակ են նպաստելու ներառական և աջակցող համայնքների կայացմանը»

ՀԿԽԸ-ն իր տեղական մասնաճյուղերի ցանցի միջոցով կիսթանի և կաջակցի ավելի ներառական, հավասար և համախմբված համայնքների կայացումը: ՀԿԽԸ-ն ձգտում է նպաստել բնակչության ներգրավվածությանը հանրային կյանքում:

Այս ուղղությամբ աշխատանք տանելով՝ ՀԿԽԸ-ն խթանում է դրական մարդասիրական արժեքները՝ իր բոլոր գործողություններով մարմնավորելով իր մարդասիրական արժեքները:

ՀԿԽԸ-ն գիտակցում է, որ այն իր դերակատարումն ունի այս նպատակն իրականացնելու գործում, և որ այն պետք է արդյունավետ աշխատանք տանի ավելի ընդարձակ ցանցի կազմում՝ մարդկանց կյանքը բարելավելու համար: ՀԿԽԸ-ն աշխատելու է գործընկերների և տարբեր տարիքի մարդկանց հետ՝ ըստ անհրաժեշտության հարմարեցնելով իր մարդասիրական մոտեցումները՝ մեզ բոլորիս հուզող խնդիրները լուծելու և վերափոխման գործողությանն աջակցելու համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ 1. ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1. Տեղահանված անձանց, ապաստան հայցողների և Հայաստանում փախստականի նման կարգավիճակում բնակվող անձանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- 1.1 ՀԿԽԸ-ի թիրախային տեղահանված անձանց, ապաստան հայցողների և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձանց կազարանի/բնակարանի հասանելիությունը բարելավվել է:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր հետևյալ ուղղություններով.

- Բարելավել տեղահանված անձանց, ապաստան հայցողների և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձանց համար մասնավոր կացարանի/վարձակալված կացարանի հասանելիությունը.
- Ընդլայնել և բարելավել ժամանակավոր և սոցիալական բնակարանների/կացարանների հասանելիությունը
- Բարելավել առկա սոցիալական բնակարանային ֆոնդը և ենթակառուցվածքը:

Ցուցանիշ

1.1.1 2026 թվականի տարեվերջի դրությամբ թիրախային տեղահանված անձանց, ապաստան հայցողների և փախստականի նման կարգավիճակում հայտնված մարդկանց 20 տոկոսի ապահովում հասանելի կացարանով/բնակարանով

1.2 ՀԿԽԸ-ի թիրախային տեղահանված անձինք, ապաստան հայցողները և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձանց հասանելի են առկա թափուր աշխատատեղերը/զբաղվածության հնարավորությունները:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի ծրագիր, որի նպատակն է խթանել թիրախային ապաստան հայցողների, միգրանտների և փախստականի նման կարգավիճակում հայտնված մարդկանց եկամուտ ստանալու ուղղությամբ տարվող աշխատանքները՝ աշխատանքի տեղավորման, ինքնաապահովմանն աջակցելու և աշխատաշուկայի ընդլայնման միջոցով:

Ցուցանիշ

1.2.1 2026 թվականի տարեվերջի դրությամբ ՀԿԽԸ-ի թիրախային տեղահանված անձանց, ապաստան հայցողների և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձանց շրջանում գործազրկության մակարդակի նվազում 30 տոկոսով

1.3. ՀԿԽԸ-ի թիրախային տեղահանված անձանց, ապաստան հայցողների և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձանց հասանելի է սննդամթերքը և ոչ պարենային ապրանքը (ՈՊԱ):

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի արտակարգ իրավիճակներում մարդասիրական օգնություն ցուցաբերելու ծրագիր՝ սննդամթերք և ոչ պարենային ապրանք բաժանելով թիրախային տեղահանված անձանց, ապաստան հայցողներին և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձանց:

Ցուցանիշ

1.3.1 Առնվազն 2 տարին մեկ անգամ առնվազն 9000 տեղահանված անձինք, ապաստան հայցողներ և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձինք ՀԿԽԸ-ից ստանում են սննդամթերք և ոչ պարենային ապրանք:

1.4. ՀԿԽԸ-ի թիրախային տեղահանված անձինք, ապաստան հայցողները և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձինք բարելավել են իրենց տնտեսական վիճակը և դարձել են ինքնաբավ:

Միջամտության ուղղություն

ՀԿԽԸ-ն կիրականացնի արտակարգ իրավիճակներում մարդասիրական օգնություն ցուցաբերելու ծրագիր՝ թիրախային տեղահանված անձանց, ապաստան հայցողներին և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձանց բաժանելով սննդամթերք և ոչ պարենային ապրանք և տրամադրելով աջակցություն կանխիկ վճարման կտրոնների (վաուչեր) տեսքով:

Ցուցանիշ

14.1 2026 թվականի տարեվերջի դրությամբ ՀԿԽԸ-ից սննդամթերք ու ոչ պարենային ապրանք և կանխիկ վճարման կտրոնների տեսքով աջակցություն է ստացել առնվազն 5000 ընտանիք:

ԱՎԼԿԱԼ ՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՏՄԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ ԵՎ ՀԱՃԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻՆՔ/ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ
<p>1.1.1 2026 թվականի տարեվերջի դրությամբ թիրախային տեղահանված անձանց, ապաստան հայցողների և փախստականի նման կարգավիճակում հայտնված մարդկանց 20 տոկոսի ապահովում հասանելի կացարանով/բնակարանով.</p> <p>1.2.1 2026 թվականի տարեվերջի դրությամբ ՀԿԽԸ-ի թիրախային տեղահանված անձանց, ապաստան հայցողների և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձանց շրջանում գործազրկության մակարդակի նվազում 30.</p> <p>1.3.1 Առնվազն 2 տարին մեկ անգամ առնվազն 9000 տեղահանված անձինք, ապաստան հայցողներ և փախստականի նման կարգավիճակում հայտնված անձինք ՀԿԽԸ-ից ստանում են սննդամթերք և ոչ պարենային ապրանք:</p> <p>1.4.1 2026 թվականի տարեվերջի դրությամբ ՀԿԽԸ-ից սննդամթերք ու ոչ պարենային ապրանք և կանխիկ ու վաուչերային աջակցություն է ստացել առնվազն 5000 ընտանիք:</p>	<p>1.1.1 Առկա վիճակագրական տվյալներ, ՀԿԽԸ-ի, Կառավարության, ՄԱԿ-ի և ՀԿ-ների զեկույցներ, մասնակցային գնահատման արդյունքներ.</p> <p>1.2.1 Առկա վիճակագրական տվյալներ, ՀԿԽԸ-ի, Կառավարության, ՄԱԿ-ի և ՀԿ-ների զեկույցներ, մասնակցային գնահատման արդյունքներ.</p> <p>1.3.1 Շահառուների տվյալներ և ՀԿԽԸ-ի զեկույցներ.</p>	<p>1.1.1 Տարեկան զեկույց.</p> <p>1.2.1 Եռամսյակային և տարեկան զեկույցներ.</p> <p>1.3.1 Ամսական զեկույցներ.</p> <p>1.4.1 Ամսական զեկույցներ</p>	<p>ՀԿԽԸ-ի Բնակչության տեղաշարժի բաժնի ղեկավար</p>

	1.4.1 Շահառուների տվյալներ և ՀԿԽԸ-ի Ծրագրի մշտադիտարկման զեկույցներ		
--	---	--	--

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ

Հայաստանի Առողջապահության ոլորտում գործում են համապատասխան շահագրգիռ կողմեր, ովքեր ունեն նմանօրինակ հետաքրքրություններ, իրականացնում են նմանօրինակ գործունեություն և անգամ ունեն նույն հնարավոր թիրախային խմբերը, ինչ ՀԿԽԸ-ն: Ազգային ընկերությունը պետք է ջանքեր գործադրի այդ շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրի հետ իր հաստատված փոխհարաբերությունները և համագործակցությունը պահպանելու և (կամ) նրանց հետ փոխհարաբերություններ և համագործակցություն հաստատելու ուղղությամբ՝ նրանց և իր կողմից նույն աշխատանքի կատարումը կամ աշխատանքի կրկնությունը բացառելու և ակնկալվող արդյունքների ու նախանշված փոփոխության արդյունավետ իրականացմանը նպաստելու ուղղությամբ համատեղ ջանքերն առավելագույնի հասցնելու համար: Այս նպատակի մասով բացահայտված հիմնական շահագրգիռ կողմերն են՝ ՀՀ Կառավարության տարբեր նախարարությունները և տեղական ինքնակառավարման մարմինները, ՄԱԿ-ի գործակալությունները և Հայաստանում ԵՄ գրասենյակը, ինչպես նաև՝ մի քանի այլ ՀԿ-ներ, օրինակ՝ «Հայկական Կարիտաս», «Առաքելություն Հայաստան» և «Բնակարանային հարցերով կոնսորցիում» («Housing» կոնսորցիում), որոնք կարող են համարվել ՀԿԽԸ-ի անմիջական մրցակիցներ, քանի որ նրանք մրցակցում են նույն աղբյուրներից ֆինանսավորում ստանալու համար, և նրանց ծրագրերի հնարավոր շահառուները կարող են համընկնել:

ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

